



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

376

Կ. Ա. Լ. Ի. Ժ. Վ. ՆԱԶԼԱՍԵԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ

ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1904

2(075)

Շ-18

ՎԱՀՐԻՃ Ծ՝ Վ՝ ՇԱՀԼԱՄԵԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ

ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹՆՈՍԵԱՆ

1904

1001

2010

(ՎԱՀՐԻՃ Ծ. Վ. ՇԱՀԼԱՄԵԱՆ)

2(075)

Շ-18

ԿՐԹՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱԸՆԹԱՑՔԻ

ՆԱԽԱԿՐԹ-ՍՐԱՆԻ

ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅ ՎԱՐՅԱՐԱՆԱՑ

5
81-5



Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Գ. ՊԱԼԵՆՑ

1904

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՀԱՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Համար 1806

Ա Ր Տ Օ Ն Ա Գ Ի Ր

Զերկատիրութիւն մակագրեալ Կրօնական Ուսումն պատրաստեալ յաշխարհիկ բարբառ ի Հոգ. Տ. Վահրէճ Ծ. Վրդ. Ե Շահլամեան իբր դասագիրք ի պէտս մանուկ աշակերտաց տարրական դասընթացից Հայ վարժարանաց, Կրօնական Ժողովն Հայ Կեդրոնական Վարչութեան, ըստ արդեանց պաշտօնական քննութեան, արժանի համարեցաւ արտօնել ի հրատարակութիւն եւ յանձնարարել ի կիրառութիւն Հայ վարժարանաց, և մեր ըստ այնմ հրամայեմք ի գործադրութիւն :

Մնամք Աղօթարար
Պատրիարք Կ. Պոլսոյ
ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
Թիւ 27, Ֆիննաներլար եօզուու, Կ. Պոլիս

معارف عمومیہ نظارت جلیله سنک فی شوال ۳۲۱ و ۱۵ کانون اول ۳۱۹
تاریخی و ۳۳۹ نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدر

ՄԻՐՅԵՍԱԼ ՀՕՐՍ

ՍԱՐԳԻՍ ՇԱՀԼԱՄԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԵՐԿՈՒ ԵՕՍԻՔ

ԿՐՕՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԻ

ՊԱՏՐԱՍՏՈՒՔԵԱՆ ՄԱՍԻՆ



Ժամանակէ մ'ի վեր կրօնական ուսումը տարածելու մտօք՝ այլ ոչ ծրագրով՝ դասագիրքեր ողողեցին հրապարակը, այլ ոչ մին — կը կարծեմ — կրցաւ կրթական ծրագրի համաձայն պատրաստուած ըլլալ :

Եւրոպական հեղինակի մ'ո եւ է գործը թարգմանել եւ հրատարակել հայ մատաղ միտքերու, բնականաբար չէր ծրագրերը : Եւ ուստի կրօնական ուսումը կազ — չըսելու համար թէ ոչ իսկ — ընթացաւ վարժարանաց սեմինարէն ներս՝ դասաւանդութեանց շարքին մէջ :

Ես նկատի ունեցայ պակասը զոր փորձեցի լրացունել, կատարեալ բան մ'արտադրած ըլլալու յաւակնութիւնը չներելով իմ խոնարհ անուանս :

Դիտեցի թէ մանուկը Ս. Գրքին մէջ երեւակայութեան զարնող հատուածներու եւ մանրավէպներու պատկերացման հետ ամենէն աւելի պէտք ունի նաեւ ծանօթութեան մը եկեղեցիին մէջ թէ զուրը՝ տան մէջ տեսած եւ ամէն օր անցած դարձած ծիսական ու արարողական հարցերուն նկատմամբ : Կը հետաքրքրուի զիտնալ օրինակի համար թէ ինչո՞ւ կը խաչակնքեն՝ երբ Քրիստոսի խաչելութեան դասը կ'աւանդէ, կամ ինչո՞ւ կարմիր հաւկիթը ամէն կողմ իր կէս-խորհրդաւոր ներկայութեամբը բռնած է՝ երբ Ս. Յարութեան պատմութիւնը կ'ընեն իրեն, կամ ինչո՞ւ քահանան Չատկի Ծնունդի իրենց տունը կ'օրհնէ, եւ այլն :



62174 Կ. 2

62071-67

Ուստի կրթական ծրագրին յար եւ նման դասագիրքս պատրաստած ատեն — իւրաքանչիւր դասին նիւթը մօտէն կամ հեռուէն շօշափող կամ անոնց շօշափելու ալ — հետաքրքրական տեղեկութիւններ մը գրի ներքեւը որոնք տղան կ'ընտանեցնեն եւ կը ծանօթացնեն Ս. Եկեղեցիին մէջ մեքենաբար տեսած եւ տուներուն մէջ տեղի ունեցած կարգ մը բարեպաշտական սովորութեանց :

Կը հաւատամ թէ այսչափ շեղում մը՝ կրթական ծրագրի ոգւոյն դէմ չըլլալէ զատ՝ անոր ամբողջացման եւ անոր բացատրութեան կը սատարէ ինքնին :

Տարրական դասընթացքի «Կրօնական Ուսումն» դասագիրքիս որուն ինչպէս եւ «Բարոյական կրթութիւն» գործիս միջին եւ բարձրագոյն դասընթացքներուն դասագիրքերն ալ շուտով լոյս պիտի տեսնեն — գործածութեան եւ դասերու աւանդման համար «Բարոյական կրթութիւն» անուն գրքին մէջ խօսած ըլլալուս՝ զանց ըրի երկրորդել թէ ի՞նչ ոճով յարգելի ուսուցիչք պիտի աւանդեն եւ զայս :

Իսկ բովանդակութեան գալով՝ դասագիրքիս յորինման համար, շատ հեղինակներ՝ թէ՛ օտար եւ թէ՛ ազգային՝ ունեցած եմ իմ առջեւ, ամենէն ալ օգտուած եմ, այլ ոչ մէկէն տող մը բան առած : Կրթական ծրագրը՝ որուն յորինողին վրայ անհուն հաւատք մը եւ յարգանք մը պարտի ամէն խղճամիտ դաստիարակ, ուղեցոյց բռնեցի եւ մանուկներու մտաւոր վիճակին հետ եկեղեցականի պաշտօնիս կիրառութիւնը նպատակակէտ ունեցայ : Եթէ, ինչպէս կը հաւատամ, կրցայ օգտակար ըլլալ՝ միտքարուած եմ որ Ս. Եկեղեցիին տարածման կրցած եմ փոքրիկ օճան մը լինել . իսկ եթէ թերիներ ունիմ, բարի կամեցողութեան տէրերու կողմէ դիտողութեանց կ'անսամ, յառաջիկային լաւագոյնս պատշա-

ճեցընելու համար դասագիրքը առաջադրած նպատակիս :

Տա՛յր Աստուած որ պողաբերէին շինիչ սերմունքը որ կը հոսին՝ թէ իսկ փոքր քանակութեամբ՝ ներկայ գործէս, մատաղ միտքերու մէջ, բարեպաշտ հողիներութիւր ստուարացնելու համար :

Վ. Վ. Շ.

1903 Յուլիս 28

Ի Մաքրի-Գիւղ Կ. Պոլսոյ



Իսահակին : Աղօթքը բերանն էր Աբրահամու եղբոր
աղջիկը Ռեբեկա մօտեցաւ ջրհորին և դոյլով(*) ջուր
քաշելով խմցուց թէ Եղիազարի և թէ ուղտերուն :
— Եղիազար հասկնալով որ աղօթքը լուած է
Աստուծմէ , ոսկի օղմը և ապարանջաններ(*) տուաւ
աղջկան և հօրմէն ուղելով Քանանու երկիրը բե-
րաւ ու Իսահակին կին ըրաւ :

ԲՅՈՒՆ
67
17029

Տէրունական աղօթք . — Հայր մեր որ յեր-
կինս ես, սուրբ եղիցի անուն քո , եկեսցէ արքայու-
թիւն քո , եղիցին կամք քո , որպէս յերկինս և
յերկրի : Զհայ մեր հանապազօրդ՝ տուր մեզ այ-
սօր և թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք
թողուիք մերոց պարտապանաց , և մի տանիր զմեզ
ի փորձութիւն՝ այլ փրկեա ի չարէն , զի քո է ար-
քայութիւն , և զօրութիւն և փառք յաւիտեանս
ամէն :

Ո՞վ եւ ո՞ւր գնաց Իսահակին կին մը գտնելու : —
Ո՞ւր կեցաւ Եղիազար : — Ի՞նչ աղօթից Աստուծոյ : —
Աստուած ի՞նչպէս լսեց անոր աղօթքը : — Ի՞նչ է աղ-
ջրկան անունը : — Ո՞ւր գացին միասին : — Ի՞նչ աղօթք
գրեա : — Գոց ըսէ Տէրունական աղօթքը կանգ առ-
նելով կէտերուն վրայ :



6. ՅԱԿՈՒԲ ԵՒ ԵՍԱԻ

Իսահակ երկու զաւակ ունեցաւ՝ Եսաւ և Յակոբ : Առջինեկը՝ Եսաւ շատ մազոտ էր և որսորդ մ'եղաւ : Զանի շատ կը սիրէր Իսահակ, զի իր մահէն ետքը Աստուծոյ խոստումները անոր վրայ պիտի կատարուէին և տանը մեծը պիտի ըլլար : Բայց այս իրաւունքը Եսաւ Յակոբին թողուց, պնակ մը սասնապուրի համար : Աւ երբ որսի գացած էր, Յակոբ անոր զգեստը հագած ձեռքերն ու վիզը ուլի մորթով փաթթած, գնաց իր ծերուկ կոյր հօրը որ շոշափեց զինքը և Եսաւը կարծելով՝ օրհնեց, որով Յակոբ եղաւ տանը մեծ և Աստուծոյ ժողովուրդին գլուխ : Եսաւ իմանալով բարկացաւ : Յակոբ վախէն փախաւ միջագետք(*) : Յետոյ զղջալով դարձաւ, ներում խնդրեց Եսաւէն որ լալով գրկեց և համբուրեց եղբայրը :

Տէրունական աղօթք . — Մեր հայրը որ երկինքն ես, սուրբ ըլլայ քու անունդ, գայ իշխանութիւնդ, ըլլայ կամքդ ինչպէս երկնքի նոյնպէս երկրիս վրայ, մեր ամէն օրուան հայր սուր մեզի այսօր և ներէ մեր յանցանքին, ինչպէս որ պէտք է ներենք մեր թշնամիներուն, և մի տանիր մեզ փորձութեան(*), հապա փրկէ չարէն, քանզի քուկդ է իշխանութիւնը, ոյժը, փառքը մինչեւ վերջը, թող ըլլայ :

Որո՞նք էին Իսահակի երկու զաւակները : — Եսաւ ո՞ր իրաւունքը ձգեց Յակոբին : — Ի՞նչ բանի համար : — Ի՞նչ կերպով Յակոբ Իսահակին օրհնէնքը ստաւ : — Ո՞ւր փախաւ եւ ինչո՞ւ իրեն ներեց եղբայրը : — Տէրունական աղօթքը կրնա՞ս կրկնել խօսած լեզուովդ :

7. ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ

Յակոբ տաններկու զաւակ ունէր, բայց Յովսէփը ամենէն շատ կը սիրէր : Ասոր համար եղբայրներն ալ նախանձեցան՝ և որոշեցին մէջտեղէն վերցունել : Սր մը արար վաճառականներու ծախեցին քսան դահեկանի : Ասոնք ալ Եգիպտոս տանելով ծախեցին Պետափրէսին որ իր տան տնտեսն(*) ըրաւ : — Խելօք ու Աստուածալախ էր Յովսէփի և սիրուեցաւ տեղւոյն թագաւորէն որ Փարաօն կը կոչուէր, և անոր երազները մեկնեց : Փարաօն ալ վարձատրեց Յովսէփը և իբր փոխանորդը կարգեց բոլոր Եգիպտոսի վրայ : — Քանանու երկրին մէջ սով մը սկսաւ : Յակոբի տղաքը Եգիպտոս եկան ցորեն գնելու Յովսէփէն բայց չճանչցան զանի՝ փոխուած ու բարձրացած ըլլալուն : Յովսէփի ճանչցաւ ներեց և իր ծեր հայրը Եգիպտոս բերել տուաւ :

Տէրունական աղօթք . — Աղօթքներուն մէկ բաւամիտումը(*) մարդոց տուած է Քրիստոս մեր Տէրը որուն համար տէրունական ըսուած է : «Հայր

մեր, բառերով կը սկսի հասկցնելու համար որ աշխարհիս ստեղծողը մեզ ալ ստեղծած է հօր պէս, մեր ըրածին փոխարէն չ'ըներ մեզ, այլ ներող է ոչ միայն ինձ, ոչ միայն քեզ, այլ ամենուն :


Քանի՛ զաւակ ունէր Յակոբ : — Ի՞նչ եղաւ Յովսէփին : — Որո՞նց ծախուեցաւ : — Ի՞նչ եղաւ ու ի՞նչ ըրաւ իր եղբայրներուն ու իր հօրը : — Հայր մերը ինչո՞ւ տէրունական կ'ըսուի : — Ինչո՞ւ Հայր մեր բառերը կ'ըսենք :

8. ՄՈՎՍԷՍ ԵՒ ԿԱՐՄԻՐ ԾՈՎՈՒ ԱՆՑՔԸ

Մովսէս Աստուծոյ հրամանին վրայ փարաւունէն հրաման ուզեց Իսրայէլի ժողովուրդը տանելու Քանանու երկիրը, իսկ նա շատ խստանալէ(*) ու շատ պատժուելէ ետք միայն թողուց : — Երբ կարմիր ծովուն եզերքը հասան, Փարաւոն զիրենք ձգելուն վրայ զղջալով բանակովը վրայ հասաւ : Բայց Մովսէս ըսաւ, «Աստուած ձեր տեղը պիտի կռուի», ու թեւը երկնցուց ծովուն վրայ : Աստուած սաստիկ հով մը զրկեց, ջուրը քաշուեցաւ և Իսրայելացիները չոր ուղով անցան ծովէն : — Փարաւոն ձիաւորներովն ու կառքով հետեւեցաւ անոնց : Մովսէս նորէն թեւը տարածեց(*) ծովին վրայ : Չուրը լեցաւ ու խեղդեց Փարաւոնի բանակը ամբողջ : Հրեայներն այս ազատութիւնը տօնելու և յիշելու համար օրհնութիւն մը երգեցին :

Հայր մեր . — Եթէ Ան՝ հայր է մեզ, կը սիրէ մեզ ուրեմն : Մենք ալ պարտաւոր ենք ուրեմն նախ զինքը սիրել, և բարի զաւակ ըլլալու համար իր հրամանները կատարել : Երկրորդ, քանի որ մեր ամենուն հայրն է, մենք ամենքս ալ եղբայրներ ենք, պէտք է որ զիրար սիրենք և եղբօր պէս վարուինք և օգնենք միշտ իրարու :

Ո՞վ եւ ինչո՞ւ գնաց Փարաւոնի : — Ե՞րբ հասաւ Փարաւոն Իսրայէլի ժողովուրդին : — Ի՞նչ ըրին Իսրայելացիները երբ տեսան Փարաւոնի բանակը : — Ի՞նչ պէս ազատեցան : — Ի՞նչպէս Փարաւոն պատժուեցաւ : — Հայր մերը ի՞նչ կը սորվեցունէ : — Ի՞նչ կ'ընէ հայրը : — Մեր ամենո՞ւն է թէ մինակ իմս :



Բ. ԱՄԻՍ

9. ՕՁԱԳԼՈՒԻ ԳԱԻԱԶԱՆԸ

Իսրայելացիները 40 տարի թափառեցան անապատի մէջ և յուսահատեցան : Սկսան Մովսէսէ և Աստուծոյ տրանջալ թէ Եգիպտոսէն դուրս հանեցիր որ հոս անօթի ծարաւ մեռցունէք մեզ : Աւելի լաւ չէ՞ որ Եգիպտոս դառնանք : — Աստուած զանոնք պատժելու համար թունաւոր օձեր զրկեց անոնց մէջ և շատեր խայթուելով (*) կը մեռնէին : ողջերը ներում խնդրեցին Մովսէսէն որ ժողովուրդին կողմէ Աստուծոյ աղօթէ և հեռացունէ իրենցմէ օձերը : Եւ Մովսէս աղօթեց անոնց կողմէ : — Աստուծոյ հրամանով Մովսէս պղնձէ օձ մը շինեց և գաւազանի մը գլուխն անցունելով անկեց ժողովուրդին առջեւ : Օձահարները (*) նայելով այդ օձին և հաւատալով թէ անկէ է իրենց առողջութիւնը՝ բժշկուեցան :

Խաչվեաց . — Յակովբոս Տեառնեղբայր՝ Քրիստոսի համբառնելէն ետքը փայտէ խաչ մը շինելով բարձրացոյց ու երգեց , « Խաչի քո Քրիստոս , երկրպագանեմք » . դառնալով աշխարհի չորս կողմերուն օրհնեց ամենքը : Այս է Խաչվեացը , որուն շարականը կ'ըսէ թէ պղնձէ օձին պէս խաչին ալ հաւատացողը կը բժշկուի :

Քանի՞ տարի թափառեցան Իսրայելացիներն անապատի մէջ : — Աստուած անոնց արտունջին ի՞նչ պատիժ սուաւ : — Ի՞նչ ըսին Մովսէսի : — Ի՞նչ հրաման ըրաւ Աստուած : — Ի՞նչ պէս կը բժշկուէին օձահարները : — Ի՞նչ է Խաչվեացը : — Յակովբոս Տեառնեղբայր ի՞նչ երգեց եւ ո՞ւր դարձաւ : — Ինչո՞ւ է պղնձէ օձը , եւ ինչո՞ւ է խաչը :

10. ՅԵՓԹԱՅԷ

Իսրայելացիները իրենց Աստուածը թողլով կուռք պաշտեցին : Աստուած ալ զիրենք տասն եւ ութ տարի Ամնացիներուն ձեռքով պատժեց և երբ դարձան Աստուծոյ՝ Յեփթայէն դատաւոր դրաւ : — Յեփթայէ Ամնացիներուն դէմ կուռի երթալու ատեն ուխտ ըրաւ որ եթէ յաղթու թեամբ դառնայ , իր տունէն ով որ նախ իր առջեւն ելնէ , Աստուծոյ նուիրէ : Երբ յաղթեց դարձաւ , իր մէկ հատիկ աղջիկը թմբուկը ձեռքը պարելով դիմաւորեց : — Հայրը լացաւ , բայց աղջիկը հօրը սիրոյն համար հնազանդեցաւ : « Քանի որ Աստուած թշնամիներուդ յաղթեց , հայրիկ , կատարէ ուխտդ , ես պատրաստ եմ » : Եւ երկու ամիս ընկերուհիներուն հետ լայլէ ետք՝ իր կեանքը նուիրեց Աստուծոյ ծառայութեան :

Որ յեփլինս ես . — Աստուած ամէն տեղ է , հոն է՝ ուր բարի կը գործենք , նաև հոն՝ ուր չա-

րիք կ'ընենք, ուստի կը տեսնէ մեր ամէն գործեր: Մօտ է անոնց որոնց կը հակառակինք, մօտ է անոնց ալ զորս կը սիրենք, և կը տեսնէ նոյնպէս մեզ: Բայց աւելի, այս ամենէն վեր ալ է, բարձր է մենէ այնչափ որ՝ երկինքը կը բնակի և կը վայլէ որ անկէ նայի մեզի:

Իսրայելացիները ինչո՞ւ պատմուեցան: — Ինչո՞ւ Յեփթայէ դատաւոր եղաւ: — Ինչ ուխտ ըրաւ: — Ազջիկը ի՞նչ բաւ հօրը երբ հայրը կուլար: — Աստուած ո՞ւր է: — Ո՞ւր կը վայլէ որ բնակի:

II. ՍԱՄՍՈՆ

Սամսոն դատաւոր՝ ուխտած էր չկտրել մազերը, գինի, օղի չխմել: Աստուած փոխարէն՝ ոյժ տուաւ, անանկ որ տասն եւ ութ տարեկան էր՝ անդէն՝ (*) առիւծ մը պատուեց: — Փղշտացիները վախցունելու համար ազուէսներ բռնեց, պոչերուն ջահեր կապելէ ետք արտերը ձգելով օրանը այրեց: Փղշտացիները Իսրայելացիներուն վրայ եկած որոնք վախնալով Սամսոնը երեք հաստ ճոնճանով (*) կապեցին և յանձնեցին: Բայց նա խզեց (*) կապերը և սատկած էչի մը ծնօտով հազար Փղշտացի մեռուց: — Իր Դալիլա կինը բռնին մէջ մազը սափրեց (*) և մատնեց թշնամիներուն որոնք աչքերը փորեցին: Օր մ'երբ կուստունին սիւնն-

բուն կապեցին որ ծաղրեն, մազերը երկնցած ըլլալով ոյժը վրան եկաւ և Աստուծոյ ազօթելով ցնցեց կուստունը (*) և կործանեց մարդերովը:

Ուխտագնացութիւն. — Ուխտի կ'երթան այն վանքերը ու եկեղեցիները որոց մէջ թաղուած Սուրբը ունեցած է իր կեանքին մէջ այնպիսի յատկութիւն մը որ կը պակսի ուխտի դացողներուն: Ով որ մոլութենէ մը կ'ուզէ ետ կենալ, կամ գործի մը ձեռնարկել, այն սուրբին առջեւ Աստուծոյ ոյժ և համբերութիւն խնդրելով կը սկսի գործին:

Ինչ ուխտ եղած էր Սամսոնի համար: — Աստուած ինչպէս ընդունեց անոր ուխտը: — Ինչ ըրաւ Սամսոն այդ ոյժով: — Ո՞վ մազերը սափրեց: — Ե՞րբ ազօթեց Աստուծոյ, լսե՞ց Սամսոնի խնդիրքը: — Ո՞ւր կ'երթան ուխտի: — Ինչո՞ւ կ'երթան:

12. ՍԱՄՈՒԷԼԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Ուխտի զուակ էր Սամուէլ, որուն մայրը Աննա երբ կաթէ կտրեց՝ տարաւ Հեղի քահանայապետին որ Տէրօջը տաճարին մէջ պահեց եւ կրթեց: — Գիշեր մը Տէր Աստուած Սամուէլը կանչեց որ կարծելով թէ Հեղին է՝ կուգայ կ'ըսէ, « Ահա եկայ Տէր »: « Բեղ կանչող չեղաւ, դնա

պառկէ, « կ'ըսէ Հեղի : Նորէն Աստուած կը կան-
չէ և Սամուէլը Հեղիին քով կը վազէ որ կը ճամբէ
պառկելու : Երրորդ անգամ երբ Սամուէլը կը կան-
չուի ու Հեղիին կը վազէ, Հեղի կը հասկնայ ու
կ'ըսէ . երբ նորէն կանչուիս, ըսէ, « Խօսէ Տէր » :
— Տէր Աստուած Սամուէլը նորէն կանչելով կը
յայտնէ թէ Հեղին պիտի պատժուի իր չար տղա-
քը չպատժելուն համար : Իրաւյնէ երբ Հեղի լսեց
թէ երկու մանչերը կռուի մէջ մեռեր են, կրնա-
կի վրայ ինկաւ մեռաւ :

Առ.բբ եղիցի անուն ԲՈ. — Աստուծոյ անու-
նը Սուրբ է, մեր բերանը պարապ բանի համար
առնուելու չէ, անով երգում ընելու չենք : Երբ
զաւակը յանցանք մը գործէ, հայրը կը մեղադր-
ուի, կը հայհոյուի : Մենք ալ Աստուծոյ զաւակը,
փափաքելու ենք որ մեր հայրը գէշ մարդոց հայ-
րը չըլլայ, չնախատուի (*), այլ օրհնուի գովուի :

Ի՞նչ է Սամուէլի մօր անունը : — Ռ'վ պահեց տա-
ճարին մէջ : — Ի՞նչ պատահեցաւ գիշեր մը Սամուէլի
ու ի՞նչ պատասխանեց Աստուծոյ : — Ինչո՞ւ Աստուած
պատժեց Հեղին և ի՞նչպէս մեռան անոր զաւակները : —
Աստուծոյ անունը ի՞նչպէս է : — Զաւակ մը ի՞նչ պար-
տաւոր է ընել :

13. ԴԱԻԹ ՈՒ ԳՈՂԻԱԹ

Փղշտացիներէն պինտ (*) հսկայն՝ Գողիաթ Իս-
րայէլացիները նախատելով կ'ըսէր . ձենէ քաջը (*)
թող հրամայէ ինձ հետ կռուելու : — Պատանի հո-
վիւ մ'էր Դաւիթ որ պատահմամբ (*) պատերազ-
մի (*) դաշտը գընացեր էր : Յոյսը Աստուծոյ և իր
քաջութեանը վրայ դնելով, ցուպը՝ պարսատիկն (*)
ու հինգ պարսաքար (*) առած, ելաւ Գողիաթին
դէմ որ պուսաց, « Ծո՞ւն եմ որ ցուպով կուգաս
վրաս » : — Դաւիթ ըսաւ, « Դուն սուրով՝ նետով
ու վահանով կուգաս, ես կուգամ քու նախատած
Աստուծոյ անունով : Այսօր Աստուած՝ իմ ձեռքս
պիտի տայ զքեզ և բոլոր երկիրը պիտի գիանայ
թէ Իսրայէլի ժողովուրդը Աստուած մ'ունի : »
Ապա հանելով պարսաքար մը դրաւ պարսատիկին
մէջ և ներեց Գողիաթի ճակատին որ փռուեցաւ
գետին : Դաւիթ անոր սուրով անոր գլուխը կտրեց :

Եկեացէ աբայուրիւն ԲՈ. — Աստուծոյ իշ-
խանութիւնը բռնութիւն (*) չէ, այլ հօր մը սէրն
է : Ինչ որ կը հրամայէ սիրելով է, մեր բարին
խորհելով է : Անոր հայրական իշխանութիւնը —
որուն արքայութիւն կ'ըսենք — ուզելու ենք որ ըլ-
լայ ամենուն վրայ, չարերուն՝ բարիներուն վրայ,
ամենն ալ իր սիրովը կառավարելու համար :

Ռ'վ էր Դաւիթ և սր՞ու հետ կռուեցաւ : — Ի՞նչ

լսեց Գողիաթէն եւ ի՞նչ պատասխանեց : — Ի՞նչպէս
Դաւիթ սպաննեց Գողիաթը : — Ի՞նչպէս է Աստուծոյ
իշխանութիւնը : Ի՞նչ կ'ըսենք մենք այդ իշխանու-
թեան : — Ի՞նչ ուզելու ենք :

14. ԴԱՒԻԹ ԵՒ ՍԱԻՈՒՂ

Սաւուղին վրայ կատարութիւն մ'եկաւ զոր
կը բռնէր Դաւիթ, սաղմոսերով(*) եւ քնարով :
Այս առթիւ բարեկամացաւ անոր Յովնաթան որ-
գիին հետ զոր շատ կը սիրէր : — Երբ Դաւիթ
Փղշտացիներուն յաղթելէ կը դառնար, Իսրայէլի
կիները պարելով երգեցին . « Սաւուղ հաղար ըս-
պաննեց, իսկ Դաւիթ՝ բիւր : » Ասոր վրայ Սա-
ւուղ նախանձէն ու բարկութենէն փորձեց սպան-
նել Դաւիթը որ Յովնաթանին խրատին վրայ
անսպասել փախաւ : — Սաւուղ Դաւիթը հալածե-
լու ատեն շատ անգամ անոր ձեռքին ինկաւ, բայց
Դաւիթ կ'ըսէր, Սաւուղ Աստուծոյ օժեակն է,
մեղք է անոր ձեռք դպցնել : Սաւուղ անձնասպան
եղաւ, մէկը Դաւիթին սիրելի ըլլալու համար ըսաւ
թէ ինք սպաննեց Սաւուղը, Դաւիթ ալ զանի
սպաննեց :

Սաղմոս, ծնծղայ, երգեհոն . — Դաւիթին
չինած կամ հաւաքած երգերը 150 են Սաղմոս
անունով, որ եղանակով կամ թիւ (*) կ'ըսուին և
սպաշխարութեան համար կը քաղուին : Դաւիթ

քնարով կ'երգէր, ուստի նուազը հնուց մտած է,
երգեհոնն ու քշոցը, ձայն բռնելու համար, և
ծնծղայն հանդիսաւոր և տօնական օրերու մէջ
փառաբանելու համար :

Սաւուղ ի՞նչ եղաւ : — Յովնաթանն ո՞վ էր : —
Իսրայէլի կիները ի՞նչ երգեցին : — Սաւուղ ի՞նչ կը
խորհէր Դաւիթի համար, եւ Դաւիթ ի՞նչ : Ի՞նչ ըրաւ
Դաւիթ խաբեբայի մը : — Ի՞նչ է Սաղմոսը : — Քնարը
ի՞նչ է : — Երգեհոնն ու քշոցը ինչո՞ւ համար են : —
Իսկ ծնծղայն :

15. ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ

Սողոմոն թագաւորը շատ կը սիրէր զԱստուած
որ գիշեր մը երեւնալով իրեն հարցուց . ի՞նչ կ'ու-
զես որ տամ քեզ : Ան ալ ըսաւ . տո՛ւր ինձ իմաս-
տութիւն որ ժողովուրդը կառավարեմ ու բարին
չարէն զատեմ : — Աստուած ըսաւ քանի որ ոչ
փառք կ'ուզես ոչ դրամ, կուտամ իմաստութիւն,
նաև փառք ու դրամ : Այդ խելքով նշանաւոր
եղաւ և դատը տեսաւ երկու կիներու որոնցմէ
մէկը տղան գիշերը անգիտութեամբ խեղդելով
միւս կնոջ ողջ տղուն հետ փոխեց : — Առտուն
երկու մայրերը բողբեցին Սողոմոնի որ հրամայեց
տղան մէջտեղէն կիսել և երկու մայրերուն տալ :
Մին հաւանեցաւ բայց բուն մայրը ըսաւ, թող

տղաս չկարուի և մնայ այդ կնոջ քով : Ասոր վրայ
թագաւորը ճանչցաւ տղուն մայրը և յանձնեց
ողջը անոր :

Եղիցին կամփ քա որպէս յերկինս եւ յերկրի .
— Երկիրքի վրայ Աստուած իր կամքը գործադրած
է , անանկ որ արեւը՝ լուսինն ու աստղերը ան-
խափան (*) իրենց շրջանը կ'ընեն : Խնդրենք որ իր
կամքը երկրիս վրայ ալ կատարուի : Բարի Աստու-
ծոյ բարիքները երկիրն արտադրէ (*) : Մենք ալ
մեր կամքը յաւաջ շտանինք , այլ Աստուծոյ կամքը :

Ի՞նչպէս էր Սողոմոն Աստուծոյ ասջու : — Ի՞նչ
աղօթք ըրաւ Աստուծոյ : — Ի՞նչպէս լսուեցաւ : — Ի՞նչ
զատ տեսաւ Սողոմոն : — Ո՞ր կիներ էր ճշմարիտ մայրը :
— Աստուծոյ կամքը ո՞ր կատարուած է : — Ո՞ր կա-
տարուելու համար մեր աղօթքն ըլլալու է : — Մե՞ր
կամքը կատարուի թէ Աստուծոյ :

16. ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԷՆ

Եղիա Մարգարէն (*) Իսրայէլացիներն ու Բա-
հաղ կուռքին (*) քուրմերը (*) Կարմեղոս լեռան
վրայ Ժողկելով ըսաւ . Երկու եղ բերէք , թող
քուրմերը մին զատեն իրենց զո՛հի սեղանին վրայ
դնեն և միսն ալ ես մեր սեղանին վրայ : Երկու
կողմէն աղօթք ըլլայ : Ո՞ր զո՛հին վրայ որ երկին-
քէն կրակ թափի ու այրէ , թող անոր աստուա-

ծը ճշմարիտ ճանչցուի : — Քուրմերն աղօթեցին ,
բայց Բահաղ չսեց : Եղիա ըսաւ , բարձր պուա-
ցէք , թերեւս Բահաղ կը զբօսնու կամ կը զբաղի
կամ քուն է : Պուացին պուացին բայց պատաս-
խան չառին : — Այն ատեն Եղիա աղօթեց , «Ո՞վ
Տէր , ճանչցուր ինքզինքդ հիմա թէ դու ես ճշ-
մարիտ Աստուածը» : Երկիրքէն իսկոյն կրակ թա-
փեցաւ ու այրեց զո՛հը : Ամէնքը պուացին , ար-
գարեւ , Տէրն է Աստուած , Տէրն է Աստուած :

Զնաց մեր հանապազօրդ՝ տուր մեզ այսօր .
— Հաց ըսելով մինակ ուտելիք չհասկցուիր , այլ
ամէն պէտքերդ՝ զգեստ՝ բնակարան ու հանգիստ :
Մարդ քանի չէ մեռած , ամէն օրուան պէտքերն
են ասո՛նք : Այսօր ալ պէտք է որ խնդրենք Աս-
տուծմէ այդ հացը : Ոչ թէ Աստուած չգիտեր ու
չզրկեր , այլ զինքը յիշելու միջոց մ'է այս :

Ո՞ր լեռան վրայ Եղիա հաւաքեց Բահաղի քուր-
մերը : — Ի՞նչ ըսաւ անոնց : — Ի՞նչ ըրին ու ի՞նչ ըսաւ
Եղիա իրենց : — Ի՞նչ աղօթք ըրաւ Եղիա եւ ի՞նչպէս
լսեց Աստուած : — Հաց ըսելով ի՞նչ կը հասկնանք : —
Աստուած չգիտէ՞ մեր պէտքը որ մենք կ'երնենք կ'ա-
ղօթենք եւ կը խնդրենք մեր պէտքը :



17. ԵՂԻՍԷ ԵՒ ՆԷԵՄԱՆ

Ասորուոց Նէեմանն զօրալարը բորոտ էր : Իր հրեայ սպասուհին իմացուց թէ Սամարիոյ մէջ Եղիսէ մարգարէն կայ որ կրնայ բորոտութենէ սրբել : — Նէեմանն իր կառքովը գնաց Եղիսէ մարգարէին դրան առջև կանգ առաւ : Մարգարէն մարդ զրկեց ըսելու որ երթայ եօթն անգամ Յորդանանի մէջ լուացուի, եւ մարմինը պիտի առողջանայ ու սրբուի : Նէեմանն բարձրացած ըսաւ. «Ես կը կարծէի թէ Մարգարէն դուրս պիտի ելնէր, իր Աստուծոյն աղաչէր ու ձեռքը վէրքերուս վրայ դնելով բժշկէր : Դամասկոսի ջուրերը ի՞նչ վար կը մնան Խորայէլի ջուրերէն : » — Բայց ծառաները ըսին, Մարգարէն այնչափ դժուար բան մը պատուիրեց որ չես ըրեր : Նէեմանն ասոր վրայ եօթն անգամ թաղուեցաւ ջուրին մէջ և բժշկուելով հաւատաց Աստուծոյ :

Եւ թող մեզ զպարտիս մեր . — Աստուծոյ հրամանները չկատարելով, մեծերուն անհնազանդ գտնուելով, մեր նմանները չսիրելով և իրեն իբրև զաւակ մեր պարտականութիւնը մոռնալով յանցաւոր կ'ըլլանք իր առջև : Ուստի խնդրելու ենք որ

իբրև մեր բարեգութ հայրը՝ ներէ մեր յանցանքը եւ ողորմէ մեզի :

Ի՞նչ եղեր էր Նէեման : — Ո՞ր Մարգարէն գտնուու գնաց : — Ի՞նչ հրաման ըրաւ Նէեման : — Մարգարէին հրամանը կատարելէ հաք ի՞նչ եղաւ : — Ե՞րբ յանցաւոր եւ պարտական կ'ըլլանք Աստուծոյ : — Ի՞նչ ընելու է :

18. ԳՈԹՈՂԻԱ ԵՒ ՅՈՎԱՍ

Երբ Ոքողիա մեռաւ, մայրը՝ Գոթողիա թագուհին ինք իշխանութեան գլուխ անցաւ : — Մինակ մէկ տարեկան իր կաթնկեր (*) թոռը Յովաս տաճարին մէջ իր հօրքրոջ ամուսնոյն՝ Յովիադաքահանայապետին ձեռքին տակ պահուելով, Աստուծոյ ճամբուն մէջ մեծցաւ : — Երբ եօթն տարեկան եղաւ, Աստուծոյ հրամանով Յովիադաքահանայապետը մեծամեծները համոզելով Յովասը թագաւոր օծեց (*) և պսակեց :

Սուրբ Միւռոն . — Միւռոն կ'ըսուի այն սուրբ իւզին որ հարիւրաւոր անուշահոտ ծաղիկներով կը պատրաստուի ազգիս կաթողիկոսներուն կողմէ օրհնութիւններով՝ աղօթքներով ու շարականներով : Ասով կ'ըլլան ամէն օծումները, թէ քրիստոնեային՝ մկրտութեան ատեն, թէ եկեղեցակահանին, թէ եկեղեցիին և անոր սրբութեանց :

Ո՞վ էր Գոթոզիա եւ Ի՞նչ ըրաւ : — Քանի՞ տարեկան էր Յովաա երբ թագաւոր օծուեցաւ : — Միւսոնը Ի՞նչպէս կը պատրաստուի : — Ի՞նչ կ'ըլլան Միւսոնով :

19. ԵՍԱՅԻ ԵՒ ԵԶԵԿԻԱ

Եզեկիա թագաւոր հոգեվարք էր : Եսայի մարգարէն ըսելը երթալով ըսաւ , «Պիտի մեռնիս, տանդ հրաման մ'ունիս՝ ըրէ :» Եզեկիա երեսը պատին դարձուցած ազօթեց Աստուծոյ . «Ով Տէր, յիշէ զիս եւ իմ կեանքս՝ որ արդարութեամբ ու բարութեամբ անցաւ :» Ու լացաւ : — Եսայի տունէն դեռ նոր ելած էր երբ Աստուած զանի դարձուց Եզեկիային որ ըսէ . «Այսպէս կ'ըսէ քու Տէրդ՝ Դաւիթի Աստուածը : Ես լսեցի ազօթքդ , տեսայ արցունքդ , ահա քեզ պիտի բժշկեմ . երեք օրէն անկողինէդ պիտի ելնես եւ Աստուծոյ տունը երթաս : Տասն ու հինգ տարի ալ դեռ պիտի ապրիս :» — Արդարեւ երեք օրէն առողջացաւ Եզեկիա , տաճարը դնաց շնորհակալ ըլլալու Աստուծոյ եւ տասն ու հինգ տարի ալ ապրեցաւ :

Ուրախ եւ մեծ բողոսմ մեռոց պարսապանաց . — Ոչ թէ մենք ուրիշներուն յանցանքին ներեր ենք , հապա պէտք է եւ պարտաւոր ենք որ ներենք անոնց որոնք մեզի ոչ թէ մէկ այլ եօթանասուն եօթ անգամ այսինքն շատ անգամներ յանցանք գործեցին՝ վատեցին՝ ցաւցուցին՝ բամ-

բասեցին : Եթէ ներենք մենք , Աստուած ալ մեզ պիտի ներէ :

Եզեկիայի հոգեվարքին ասեն ո՞վ եկաւ : — Աստուած Ի՞նչպէս լսեց թագաւորին ազօթքը : — Ի՞նչ ըրաւ Եզեկիա շնորհակալ ըլլալու համար Աստուծոյ : — Մենք ներե՞ր ենք մեր յանցաւորներուն : — Քանի՞ անգամ ներելու ենք :

20. ՏՈՎԲԻԹ

Տովբիթ հարուստ էր : Խեղճ հայրենակիցներուն օգնելու ասեն միշտ օրհնէքը բերանն էր Աստուծոյ համար եւ խրատը իր Տուբիա զաւկին համար . « Տղաս, զԱստուած յիշէ, հպարտ մի ըլլար , աղքատներուն ողորմէ եւ ուրիշին չկամեցածդ՝ մի սպասեր արիշէն :» — Դիպուածով մը այս բարի մարդուն աչքերը սկսան չտեսնել : Իր օրդին Մարաստան զրկելու կը մտնուար : Աստուած յիշելով անոր բարի դործերը զրկեց իր հրեշտակը (*) որ ճամբան Տուբիայի ընկեր եղաւ եւ Մարաստան տարաւ բերաւ : — Տիգրիսէն ձուկ մը բռնեցին որուն լեզուն՝ յետոյ օգտակար եղաւ Տովբիթի աչքին : Տովբիթ վարձք տալու ասեն հասկցաւ թէ Ռափայէլ հրեշտակն է եղեր իր տղուն ընկերը վասն զի անյայտ եղաւ խակոյն :

Եւ մի՛ սանիր գմեղ ի փորձութիւն . — Դիտնալու ենք թէ մինչեւ որ Աստուած մեզ չբռնէ, կ'եյնանք փորձանքի՝ նեղութեան մէջ : Ով որ հանգիստ է

և առանց փորձանքի ու առանց ցաւի, թող
չկարծէ թէ իր խելքովն է մինակ որ հանգիստ է՝
հարուստ է՝ երջանիկ է, այլ Աստուած օգնած
ըլլալուն համար է այնպէս :

Տովբիթ որոնց կ'օգնէր : — Ի՞նչ կ'ըսէր Տուբիա
զաւկին : — Ի՞նչ պատահեցաւ Տովբիթի : — Տուբիա ո՛ւր
գնաց եւ որո՞ւն հետ : — Տովբիթ ի՞նչպէս բռնկուեցաւ :
— Փորձանքի մէջ ե՞րբ կ'իյնանք : — Ինչո՞ւ կ'իյնանք :

21. ՆԱԲՈՒԳՈՒՆՆՍՈՐ ԵՒ ԵՐԵՔ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Նարուգոգոնոսոր արքայն իր հպատակներուն
հրամայեց իր սակիէ պատկերին կամ՝ արձանին
առջև ծունր դնել և երկրպագել և չհնազանդողը
հնոցին (*) մէջ այրել : — Հրեաներէն Սեդրաք՝ Մի-
սաք և Աբեթնագով ըսին . «Մեր Աստուածը եր-
կինքն է զոր մենք կը պաշտենք » և արձանին առ-
ջև չծնրագրեցին : Թագաւորը նեղացած հնոցը
եօթնապատիկ (*) տաքցուց և մէջը նետելով ըսաւ .
«Տեսնեմ, ո՞ր Աստուածն է որ ձեռքէս կ'ազատէ
ձեզ : » Ու անոնք հնոցին մէջ կ'օրհնէին զԱստ-
ուած . — Ի՛իչ ետքը արքան ըսաւ . « Չէ՞ որ երեք
հոգի նետեցինք հնոցին մէջ, այժմ չորս կ'երեւ-
ան որոնք ազատ կը չրջին բոցին մէջ և մէկը
Աստուածներուն որդիներուն կը նմանի : » Ու դաւ-
նալով ըսաւ . « Դուրս ելէք հնոցէն, Աստուծոյ
ծառաներ » ու անոնց պաշտօններ տուաւ :

Յուդարկաւորութիւն . — Ննջեցեալներուն հա-
մար տխուր երգեր ու գեղեցիկ աղօթքներ կ'ըլ-
լան տան ու եկեղեցիի մէջ և գերեզմանի վրայ
որ Աստուած անոնց յանցանքը ներէ : Մեռեալ
եկեղեցականները իրենց աստիճանին համեմատ
զգեստաւորելէ ետքը կ'օծուին պատարագի միջո-
ցին՝ ողջոյնի ատեն, և այնպէս հանդէսով կը
տարուին թաղուելու :

Նարուգոգոնոսոր ի՞նչ հրամայեց : — Ո՞ր հրեաները
հնազանդեցան : — Ի՞նչ պատիժ կրեցին : — Թագաւորը
ի՞նչ ըսաւ : — Արքայն ի՞նչ տեսաւ հնոցին մէջ ու ի՞նչ
ըսաւ : — Ննջեցեալներուն թաղումը ի՞նչպէս կ'ըլլայ : —
Մեռեալ եկեղեցականներու թաղո՞ւմը :

22. ԴԱՆԻԷԼ ՄԱՐԳԱՐԷՆ

Պարսից Դարեհ թագաւորին պալատին (*) մէջ
Դանիէլ մարգարէ իր ուղղամտութեամբ յառաջ
դիմեց ու նախարարապետ (*) եղաւ : — Բոլոր նա-
խարարները նախանձելով թագաւորին առաջար-
կեցին որ հրամայէ ամէն հպատակներուն (*) երե-
սուն օր պաշտել թագաւորը իբր Աստուած : Դա-
նիէլ բարեպաշտ մնաց և աղօթքին մէջ փառք
տուաւ Իսրայէլի Աստուծոյն, օրը երեք անգամ : —
Իր թշնամիները Դանիէլի հակառակ կենալը պատ-
մեցին թագաւորին որ նետեց գուբ մը ուր քաղ-

ցած առիւծներ պահուած էին և ցաւերով մաղթեց Դանիէլի . « Երանի թէ քու Աստուածդ քեզ փրկէր : » Աստուած պահեց զինքը առիւծներէն : Հետեւեալ օրը առտուն՝ Դարեհ գուրը երթալով ողջ գտաւ Դանիէլը և անկէ՝ հանելով՝ թշնամիները նետեց հոն :

Այլ փրկեա ի չարէ . — Աշխարհի մէջ չարիք է հօրը և մօրը խօսքը մտիկ չընել, ծայլ ըլլալ, աղտոտ և կեղտոտ ապրիլ, ընկերներուն հետ կռուիլ, բարկանալ և բերնէն տգեղ խօսքեր հանել : — Եթէ մեզ Աստուած կարողութիւն չտայ որ չարիքէն հեռի կենանք, այս մեղքերը կը գործենք : Ասոր համար աղօթելու ենք :

Ո՞ր թագաւորին ասնն ապրեցաւ Դանիէլ : — Ի՞նչ ըրին Դանիէլի թշնամիները : — Դանիէլ ի՞նչ կ'ընէր ամէն օր : — Ի՞նչպէս Աստուած լսեց Դանիէլի աղօթքը : — Ի՞նչ չարիքներ գիտես աշխարհի մէջ : — Անոնցմէ ազատելու ի՞նչ միջոց կայ :

23. ՅՈՒԴԻԹ

Հողեփեռնէս զօրավարը նարուգողոնոսորի արձանը պաշտել տալու համար շատ երկիրներ հնազանդեցուց : Զուրը կտրեց Բեաեղուա քաղաքին որ Աստուածապաշտ ըլլալով դէմ գրած էր : — Բնակիչները ջուրէ նեղուած հնազանդի կը խորհէին բայց կին մը՝ Յուգիթ համոզեց չպաղել

Աստուծմէ և գիմադրել թշնամիին : Ինք ալ աղօթելէ ետք հագուած պրուած՝ գնաց նաժիշդին (*) հետ Հողեփեռնէսի վրանը (*) : — Դիչեր մ'արբեցուց (*) զօրավարը և քունին մէջ կտրելով գլուխը բերաւ Բեաեղուացիներուն որոնք սիրտ առած փախուցին թշնամիները : Յուգիթ Աստուծոյ շնորհած յաջողութեան համար գոհարանական (*) օրհնութիւն մ'երգեց :

Խաղողի օրհնութիւն . — Հրեաները Պենտեկոստէի (*) տօնին տաճարին կը նուիրէին երախայրիքը (*) : Հայերը դեռ գարի կը ցանեն աղբիւրներուն առջեւ Կազանդին օրը իբր ամանոր որ Օգոստոսի 11ին կը պատահէր առաջ և որուն համար քանի մ'օր ետք Վերափոխման տօնին բերքերէն ամենէն աղնիւր (*) խաղողը կը նուիրուի տաճարին, կ'օրհնուի և ետքը կ'ուտուի :

Հողեփեռնէս ի՞նչ ըրաւ : — Ի՞նչ եղաւ Բեաեղուա քաղաքին : — Ի՞նչպէս Յուգիթ դէմ կեցաւ քաղաքացիներուն : — Ի՞նչ ըրաւ Հողեփեռնէսին : — Յաղթութիւնը որոնց անցաւ : — Յուգիթ Աստուծմէ ի՞նչպէս շնորհակալ եղաւ : — Պենտեկոստէի տօնին ի՞նչ կ'ըլլար : — Հայերը Կազանդի օրը ի՞նչ կ'ընէին : — Բուն Կազանդը ե՞րբ էր : — Խաղողը ինչո՞ւ Վերափոխման կ'օրհնուի :

24. ԵՍԹԵՐ

Պարսից Արտաշէս արքային Եսթեր կինը հըրեայ էր որուն հօրեղբորորդին Մուրաքէ՝ արքային

կեանքը փրկած էր : — Համան արքային սիրելի էր
և ամենէն կը պաշտուէր բայ ի Մուրաքէն որ
միայն Աստուծոյ կ'երկրպագէր : Համան բարկա-
ցած մտածեց սրէ անցնել Մուրաքէն եւ անոր
ազգը , բայց Եսթերին ազաչանքին վրայ Արքայն
ներեց հրեաներուն : — Արքան ուզեց որ Մուրաքէն
վարձատրէ՝ իր կեանքը փրկելուն համար : Համանի
հարցուց թէ ի՞նչ ընելու է մէկը երբ հաւատա-
րիմ ծառայ մը պատուել ուզէ : Նա ալ կարծե-
լով թէ արքան զինքը պիտի վարձատրէ ըսաւ .
մեծ փառքով շրջեցունել տալու է փողոցները :
Արքան ըսաւ . « Լաւ ուրեմն , այդպէս ըրէ Մուրա-
քէին : » Համան ահամայ (*) ըրաւ ու վերջը իր
չարութեան վրայ կախուեցաւ :

Ձի քո է արեայութիւն եւ զօրութիւն եւ
փառք յաւիտեանս ամէն . — Աշխարհիս վրայ Աս-
տուած միայն արքայ՝ թագաւոր ու իշխան է ,
մի միայն զօրաւորն ու կարողն է : Եւ եթէ ան
կ'իշխէ աշխարհի եւ իր ոյժը կը գործածէ , անոր
կ'իյնայ պատիւը՝ փառքը՝ փայլը : Մեզի ալ կ'իյ-
նայ այնպէս ճանչնալ եւ գովել օրհնել զԱստուած :
Առե՛ն , ըսել է « թող ըլլայ » :

Ի՞նչ ազգ էր Եսթեր եւ որո՞ւն կինը : — Ինչո՞ւ
Մուրաքէ չերկրպագեց Համանի : — Համան իր հպար-
տութեան համար ի՞նչպէս պատժուեցաւ : — Ի՞նչ եղաւ
վախճանը : — Աշխարհիս վրայ Աստուած ի՞նչ է : — Ի՞նչ
կը վայէ իրեն : — Մեզի՞ : — Առե՛ն ի՞նչ կը նշանակէ :

Գ. ԱՄԻՍ

25. ՅԻՍՈՒՍ-ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Հերովդէս թագաւորին ատեն մարդահամար(*)
կ'ըլլար Հրէաստանի մէջ : Նազարէթէն Մարիամ
ու Յովսէփ գնացին Բեթղեհէմ իրենց անունը
դրել տալու համար : Հոն Մարիամ ծնաւ իր առ-
ջինեկը որ մանչ էր : Զանի շորերով պատելէ ետք
իբր օրօրոց դրաւ մսուրի (*) մը մէջ , տուներու
մէջ՝ տեղ չգտնելուն համար : — Գաշտը հրեշտակ
մը երեւցաւ հովիւներուն որոնք վախցան , բայց
նա ըսաւ . « Մի վախնաք , ուրախ լուր մը պիտի
տամ , այսօր Բեթղեհէմ քաղաքին մէջ ծնաւ ձեր
Տէրը՝ աշխարհի փրկիչը՝ Քրիստոսը : Նշան ձեզի ,
մսուրքին մէջ տղայ մը պիտի գտնէք , Ան է » : —
Շատ հրեշտակներ ալ միաբերան կ'երդէին . « Փառք
Աստուծոյ՝ երկինքին մէջ , խաղաղութիւն՝ երկրի
մէջ , սէր՝ մարդոց մէջ » : Հովիւները վազեցին
մսուրքը ու գտան Յիսուս մանուկը Մարիամին ու
Յովսէփին մօտ :

Չե՛նեամա՛ծ , բազկասարա՛ծ . — Քրիստոնեան
« Փառք ի բարձունս » ի եւ « Հաւատաւք » ի ատեն
ձեռնամա՛ծ կամ ձեռքերը իրարու միացուցած
կը կենայ՝ կարգացուածին համեմատ (*) ու միա-

բան ըլլալը ցուցունելու համար : Չեռքերը պարզած կամ բազկատարած կ'աղօթէ , « Առէք կե-
րէքսի , « Սուրբ Աստուած »ի , « կեցո »ի եւ ծնրա-
դրելով աղօթելու ատեն :

Ո՞ր ատեն եւ ո՞ր քաղաքին մէջ ծնաւ Յիսուս եւ
ո՞ր դրին իր ծնունդէն ետքը : — Որո՞նց եւ ի՞նչպէս
ամենէն առաջ տրուեցաւ այս լուրը : Ո՞րն է հրեշ-
տակներուն կրգը : — Քրիստոսնեան կ'ըր ձեռնամած պի-
տի կենայ : — Ե՞րբ բազկատարած :

26. ՄՈԳԵՐՈՒ ԱՅՅԸ

Հերովդէս թագաւորը Յիսուսի ծնունդը իմա-
նալով շատ անհանգիստ եղաւ : Քահանաներուն
ու գիտուններուն հարցուց Յիսուսի ծնելիք տեղը :
Անոնք ալ Միքիա մարգարէին գիրքէն անոր կար-
գացին Բեթղեհէմի մէջ ծնելը : — Հերովդէս
գաղանի երեք մոգերը կանչելով Բեթղեհէմ՝ զըր-
կեց ու ըսաւ . « Գացէք գտէք մանուկը , ձեր ուխ-
տը կատարելէ ետք , իմացուցէք որ ես ալ երթամ
ու պաշտեմ » : Մոգերը ճամբայ ինկան , և ահա
այն աստղը որ բերած էր զանոնք մինչեւ Երու-
սաղէմ , երեւցաւ նորէն ու տարաւ Բեթղեհէմ
Յիսուսի մօտ որուն ընծայ ատին ոսկի ու խունկ
և զմուռս և պաշտեցին : Յետոյ հրեշտակ մը իմա-
ցուց անոնց որ չգառնան Հերովդէսի մօտ , անոնք
ալ ուրիշ ճամբով գնացին իրենց երկիրը :

Խնկարկութիւն . — Ժողովուրդին աղօթքն ալ
է խունկը որ վեր կը բարձրանայ Աստուծոյ առջեւ :
Փոխարէն՝ Աստուծոյ օրհնութիւնը տալու համար
Ժողովուրդին կը խնկարկեն այն ամանով որ բուր-
վառ կ'ըսուի : Կիրակամութիւն (*) մեռելներուն հա-
մար աղօթք կ'ըլլայ և ամէն տուն խունկ կը ծըխ-
ուի իրենց ննջեցեալներուն համար :

Ի՞նչ եղաւ Հերովդէս : — Ո՞ր ծնիլը ո՞վ իրեն իմա-
ցուց . — Ո՞ր դրկեց Հերովդէս մոգերը : — Ի՞նչու կ'ու-
զէր իմանալ այս աղու մասին : — Ի՞նչպէս հասան մո-
գերը Յիսուսի մօտ : — Ի՞նչ ըրին ու ի՞նչ ընծայեցին :
— Խունկը Ժողովուրդին կողմէ Աստուծոյ ի՞նչն է : —
Աստուծոյ կողմէն Ժողովուրդին ի՞նչն է : — Բուրվառն
ի՞նչ է : — Կիրակամութիւն ի՞նչ կ'ընեն :

27. ՍԻՄԷՈՆ ԾԵՐՈՒՆԻ ԵՒ ԱՆՆԱ ՊԱՌԱԻ

Քառասունըը լրանալուն , Յիսուսը Երուսաղէմի
տաճարը տարին Աստուծոյ նուիրելու , ինչպէս
օրէնքը կը պահանջէր : Սիմէոն որ արդար և բարի
ծերունի մ'էր՝ ճանչցաւ մանուկը և գիրկը առնե-
լով օրհնեց զԱստուած որ արժանացուց զինքը
Քրիստոսը տեսնելու և ըսաւ . « Ալ հիմա , ո՞վ Տէր ,
քու ծառայիդ հոգին խաղաղութեամբ առ , որով-
հետեւ փրկութիւնը տեսայ » : Հոն կը գտնուէր
ութսուն եւ չորս տարեկան պառաւ մը Աննա մար-
գարէ , որ Աստուծոյ կը ծառայէր ծովով ու աղօթ-

քով : Յիսուսը տեսներով օրհնեց՝ գովեց զԱստուած և ներկաներուն յայանեց թէ Ան է Իսրայէլի փրկիչը : — Յետոյ Յովսէփ ու Մարիամ՝ Մովսէսի օրէնքը կատարելու համար Յիսուսը գնելով երկու աղաւնի նուիրեցին փոխարէն՝ տաճարին և դարձան Նաղարէթ :

Մով, Խուճկի . — Հին եկեղեցիները գեանին տակը շինուեցան հեթանոսներէն (*) պահուելու համար : Գեանին տակը մութ էր : Մութը մոմով կամ ձեթի կանդեղով և ջահով լուսացաւ : Աւետարան կարդալու ատեն մոմը ցարդ կը վառի եւ խունկը կը ծխուի Գրիստոսի պատանքի մէջ դըրուելուն և իր անուշ հոտին համար, ինչպէս հըրեաներուն մէջ կար :

Քառասունքին, Յիսուսը ո՞ր տարուեցաւ : — Սիմէոն ո՞վ էր : — Ինչ ըրաւ ու ըսաւ : — Աննա ի՞նչ ըսաւ : — Ինչո՞ւ երկու աղաւնի նուիրեցին տաճարին : — Ինչո՞ւ մոմը կը վառի եկեղեցիին մէջ : — Ինչո՞ւ խունկ կը ծխուի :

28. ԵԳԻՊՏՈՍ ՓԱՆՈՒՍԸ ԵՒ ԲԵԹՂԵՅԷՄԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Հերովդէս թագաւորը տեսնելով թէ մողերը չվերադարձան իրեն, որոշեց փնտռել տալ նորածին թագաւորը Յիսուսը և սպաննել որ մեծնալով իր իշխանութիւնը ձեռքէն չառնէ : — Հրեշ-

տակ-Ամենակալ գիշերն երեցաւ Յովսէփին ու պատուիրեց որ առնու մանուկը և փախչի Եգիպտոս վասնզի Հերովդէս կ'ուզէ սպաննել : Յովսէփ հնազանդեցաւ Աստուածային հրամանին և Մարիամն ու մանուկը առնելով փախաւ Եգիպտոս ուր մնաց իրեններով, մինչեւ որ մեռաւ Հերովդէս : — Հերովդէս ասդին հրաման ըրաւ որ կոտորեն Բեթղեհէմի ու անոր շրջակայ տեղերուն երկու տարեկանէն վար բոլոր մանուկները, յուսալով թէ անոնց մէջ կը սպաննուի Յիսուսն ալ : Այն ատեն Բեթղեհէմի գաւառին մէջ շատ մայրերու լայն ու կոծը լեցուցին սար (*) ու ձոր :

Խաչակնում, ծերագրութիւն, երկրպագութիւն . — Երբ Գրիստոսի անունը կ'ուզենք առնել մեր բերանը, կը խաչակնքենք մեր դէմքը, անոր օրհնէքը մեր վրայ բերելու համար : Կը ծնրագրենք խոնարհելու համար մենէ վեր ոյժերուն և մեզ ստեղծողին առջեւ : Կ'երկրպագենք կամ կը պագենք երկիրը, Աստուծոյ մեղի զրկած բարիքներէն մեծը երկիրը ըլլալուն համար :

Ինչո՞ւ Հերովդէս Յիսուսը սպաննել կ'ուզէր : — Ով Յովսէփին գաղտնի խրատներ կուտար Եգիպտոս երթալու և գառնալու : — Ինչո՞ւ Բեթղեհէմի և ո՞ր մանուկները ջարդուեցան : — Սար ու ձոր ի՞նչ բանով լեցաւ : — Ե՞րբ կը խաչակնքենք, ի՞նչու կը ծնրագրենք ու կ'երկրպագենք :

29. ՅԻՍՈՒՍ ՏԱՃԱՐԻՆ ՄԵՋ

Երբ Յիսուս տաճաներկու տարեկան եղաւ Յովսէփ ու Մարիամ իրենց սովորութեան համաձայն, այն տարին ալ Չատիկի տօնին գնացին Երուսաղէմի տաճարը ուխտի և իրենց ուխտը կատարելով դարձան : Բայց Յիսուս մնաց Երուսաղէմ : Յովսէփ ու Մարիամ կարծեցին թէ իրենց բարեկամներուն հետ կանուխէն ճամբայ ինկած է, մէկ օր ճամբորդեցին և երբ չգտան՝ դարձան Երուսաղէմ փնտռելու և տեսան թէ վարդապետներուն հետ կը խօսակցէր Սուրբ Գիորգիս վրայ և ամէնքը կը զարմացունէր իր փոքր հասակին մէջ այդչափ խելք ունենալուն համար : Մայրը ըսաւ, «Տղան, այս ի՞նչ ըրեր, երեք օրէ որ քեզ կը փնտռենք» : Յիսուս ալ պատասխանեց, «Ինչո՞ւ կը փնտռէիք, չե՞ք գիտեր թէ հօրս տան մէջ պէտք է որ ըլլամ» : Անոնք այս խօսքէն բան չհասկցան :

Նեխար ու մաս . — Ս. Պատարագի սեղանէն միայն կը ճաշակեն Քրիստոսի մարմնոյն արժանաւորները : Այդ սեղանէն մնացորդ փշրանքներն են նշխարը ու մասը որոնք օրհնուելով կը արտին անոնց որոնք Քրիստոսի մարմինը ընդունելու պատրաստած չեն, բայց բոլորովին անմխիթար ալ չեն ուզեր հեռանալ եկեղեցիէն, պատարագէն ետքը :

Յիսուս առաջին անգամ ե՞րբ գնաց Երուսաղէմ . —

Ծնողքը առաջ ս՛ւր փնտռեցին Յիսուսը : — Ո՛ւր գտան և և ի՞նչ ըսաւ իրենց : — Որո՞նք կը ճաշակեն Ս. Հաղորդութեան սեղանէն : — Որո՞նց կը արտի նշխարը ու մասը : — Ինչո՞ւ :

30. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ

Յովհաննէս մաղէ հագուստ մ'ունէր իր վրայ, կաշեայ գօտի մ'ալ մէջքը, Յորդանան գետին եզերքը անապատին մէջ կը բնակէր, մարախ ու մեղր կ'ուտէր : Չար մարդոց քարոզ ու խրատ կուտար որ զոջան : Չղջացողները կը մկրտէր, ասոր համար կոչուեցաւ Մկրտիչ : Երուսաղէմի Հրէաստանի և բոլոր շրջականերուն բնակիչները կուգային իրեն մկրտուելու Յորդանանի մէջ : Քարոզին մէջ կ'ըսէր . «Նս ձեզի ջուրով կը մկրտեմ, բայց մէկը կայ որ ինէ ետք պիտի գայ, ինէ զօրաւոր է և անոր կօշիկին կապը քակելու արժանի չեմ» : — Ժողովուրդը կը կարծէր թէ Յովհաննէսն էր Քրիստոսը : Բայց նա պատասխանեց թէ Քրիստոսը իրմէ ետքը պիտի գայ : Ինք անոր կարապետն է որ առջեւէն կ'երթայ և ջուրով կը մկրտէ . «բայց Քրիստոս Սուրբ Հոգիով պիտի մկրտէ զիրենք» :

Չորեքաբքի և ուրբաք . — Հիզարթի օրը հրեաները Մովսէս մարգարէին Սինա (*) լեռը ելնելուն և երկուշաբթի ալ լեռնէն իջնելուն համար պահք կը բռնէին : Քրիստոնեայք այդ օրերը փո-

խեցին չորեքշաբթիի և ուրբաթի, չորեքշաբթի օրը Գրիստոսի մատնութեան և ուրբաթ խաչելութեան համար պահք բռնել որոշելով:

Ինչպէս կապրէր եւ ո՞ւր Յովհաննէս Մկրտիչ: — Ո՞ւր կը քարոզէր: — Ո՞ւրկէ կուգային իրեն մկրտուելու: — Ո՞ւր եւ ի՞նչպէս կը մկրտէր: — Ի՞նչ խօսքով Յիսուսը կը քարոզէր: — Շարաթուան մէջ հրեաները ինչո՞ւ եւ ո՞ր երկու օրերը կը պահէին: — Ինչո՞ւ մենք չորեքշաբթի եւ ինչո՞ւ ուրբաթ կը պահենք:

31. ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Յիսուս ալ եկաւ մկրտուելու Յովհաննէսէն բայց Յովհաննէս ըսաւ, «Ես պէտք է որ քենէ մկրտուիմ, դուն ի՞նձ կուգաս», Յիսուս պատասխանեց. «Թո՛ղ հիմա, որովհետեւ այսպէս՝ կը վայլէ մեզի որ ամէն արդարութիւն կատարենք: Այն ատեն Յովհաննէս դէմ չկեցաւ Տիրոջը կամքին ու մկրտեց Յորդանանի մէջ: — Երբ Յիսուս ջուրէն կ'երնէր տեսաւ որ երկինքը բացուելով Աստուծոյ Ս. Հոգին ազաւնիի պէս երկինքէն կ'իջնէ իր վրայ: Եւ ահա ձայն մ'ալ երկինքէն կուգայ: «Դա է իմ սիրելի որդիս, ատոր հաւանեցայ»: Յովհաննէս Մկրտիչ յանդիմանեց Հերովդէս չորրորդապետը (*) անոր գէշ գործերուն համար: Ան ալ բանտարկեց զինքը: Յետոյ անոր կնոջը խօսքին վրայ գլխատուեցաւ Հերովդէսի մէկ դահիճէն:

Խաչը ջուրը ձգել. — Ծնունդին օրը կը սօնուի Գրիստոսի մկրտութիւնն ալ որ՝ երեսուն տարեկանին՝ ճիշդ ծնած օրը կատարուեցաւ Յորդանանի մէջ: Խաչը կը ձգուի ջուրը, գետին կամ կոնքի մը մէջ: Սուրբ Հոգիին իջնելուն նշան է Միւռոն կաթեցունելը՝ ազաւնիի ձեւով ամանէ մը՝ բարձրէն:

Որո՞ւն կողմէ եւ ո՞ւր Յիսուս մկրտուեցաւ: — Ի՞նչ պատահեցաւ մկրտութենէն ետքը: — Երկինքէն ձայն մը ի՞նչ ըսաւ: — Որո՞ւն կողմէ բանտարկուեցաւ Յովհաննէս եւ ի՞նչպէս մեռաւ: — Ո՞ր օրը կը սօնուի մկրտութիւնը: — Ինչո՞ւ խաչը կը ձգուի ջուրը եւ ո՞ւր: — Ս. Հոգիին իջնելուն նմանութիւնը ի՞նչպէս կ'ընեն:

32. ԿԱՆԱՅԻ ՀԱՐՍՆԻՔԸ

Յիսուս Կանա քաղաքին մէջ հարսնիքի մը հրաւիրուեցաւ իր մօրը ու աշակերտներուն հետ: Մայրը տեսնելով թէ գինին պակսեցաւ և ուրախութիւնը փախաւ, Յիսուսի ըսաւ, «Գինի չունին», յետոյ սպասաւորներուն ալ պատուիրեց որ Յիսուս ինչ որ ըսէ կատարեն: — Հոն վեց կճեայ (*) կարասներ (*) կային, ամէն մէկը 60—80 քաչ ջուր կ'առնէր: Յիսուս ըսաւ որ լեցունեն ջուրով ու անոնք լեցուցին: Յետոյ պատուիրեց որ մառանապետին տանին որ կը պահէ և կը կարգադրէ հարսնիքին ամէն պէտքերը: Երբ

անոնք տարին ջուրը գինի եղած էր : — Մառա-
նապետը խմելով հասկցաւ թէ շատ անոյշ է ,
ըսաւ փեսային , « Ամէն մարդ առաջ անոյշ գինին
կը հրամցունէ և արբենալէ ետք՝ գէշը , ինչո՞ւ պա-
հեցիր այս՝ մինչեւ հիմա » : Այս հրաշքին վրայ՝
աշակերտները հաւտացին :

Տիօրհնէք . — Գրիստոսի ծնունդը ու յարու-
թիւնը աւետելու համար առաքեալներու ատենէն
քահանաները տուները կը պտըտէին և կ'օրհնէին :
Մինչեւ հիմա պահուած է այս սովորութիւնը :
Քահանան իր ծուխին տունը երթալով կ'օրհնէ
ջուրը՝ գինին՝ աղը՝ ալիւրը՝ հացը որ առատ ըլլան
տարւոյն ամէն եղանակին մէջ , և տունը դժբաղ-
դութիւն չտեսնէ :

Ինչո՞ւ կանայի մէջ կը գտնուէր Յիսուս . — Մայրը
ինչ տեսաւ ու ըսաւ : — Վեց կարասները ինչո՞վ լեց-
ուեցան : — Ո՞ւր տարուեցան : — Ինչո՞ւ մտանապետը
մեղադրեց փեսայն : — Տնօրհնէքի արարողութիւնը ո՞ր
ատենէ կը սկսի եւ ինչո՞ւ . — Ի՞նչ կ'օրհնուի այդ ատիւ :

Ե. ԱՄԻՍ

33. ՆԱՅԻՆԻ ՊԱՏԱՆԻՆ

Յիսուս իր աշակերտներուն ու բազմաթիւ
ժողովուրդի մ'առջեւն անցած Նային քաղաքը
գնաց : Երբ ներս կը մտնէր , տեսաւ թէ բազմա-
թիւնը մեռել մը կը տանէր որուն ետեւէն անոր
որը և այլի մայրը կուլար շուարած և կը կսկծար
իր մէկ հատիկ զաւկին վրայ : — Յիսուս գնաց՝
խղճաց ու կնկանը դառնալով ըսաւ , « մի լար » :
Ետքը դագաղին (*) մօտեցաւ : Իագաղակիրները (*)
ու բազմութիւնը կանգ առին : Յիսուս իր օրհնեալ
բերանը բացաւ ու ըսաւ , « ո՞վ պատանի (*) , քեզի
կ'ըսեմ , սպքի ե՛լ » : — Մեռելը ելաւ , նստաւ ու
սկսաւ խօսիլ : Յիսուս պատանին յանձնեց իր վըշ-
տահար (*) մօրը : Հոն եղողները ամէնքը վախցան
և Աստուծոյ փառք տուին այս հրաշքին վրայ :

Իօխանուքիւն . — Եկեղեցիին մէջ ով որ մեծ
է՝ անոր կ'իյնայ կարգալ՝ երգել՝ խնկարկել՝ ծա-
ռայել : Բայց մեծը կամ մեծաւորը այս ամէնը
բաժնած է իրեն՝ քահանայից՝ սարկաւազին՝ դպիր-
ներուն միջև : Մեծին հրամանը կ'առնեն ձեռքը
համբուրելով կամ խոնարհութիւն ընելով և ապա
կը կարդան՝ կ'երգեն կամ կը խնկարկեն : Եկեղե-
ցիին մեծը միշտ ժամերգութեանց կը նախադահէ :

Նայինի մէջ ի՞նչ պատահեցաւ : — Յիսուս մօրը գլխով ի՞նչ ըսաւ : — Մեռելին ի՞նչ ըսաւ : — Ի՞նչ եղան յուզարկաւորները (*) : — Եկեղեցիին մէջ մեծը ի՞նչ պաշտօն կը վարէ : — Խոնարհութիւնն ի՞նչ է :

34. ԱՌԱՎ ՈՐՈՄԻՆ ՈՒ ՅՈՐԵՆԻՆ

Յիսուս իր աշակերտներուն հասկցներու համար թէ բարի և չար մարդիկ պիտի գտնուին, սա պատմութիւնը ըրաւ : Մարդմը իր արտին մէջ ցորեն ցանած էր, և երբ ամէնքը կը քնանային, գիշերն իր թշնամին գարով ցանքին մէջ որով ցանեց ու գնաց : — Երբ ցանքը բուսաւ, որոմն ալ ցորեններուն մէջէն երեւցաւ : Այն ատեն անոր ծառաները ըսին, « Տէր, ցորեն ցանեցիր արտին մէջ, այս որոմը ո՞ւրկէ է » : Տէրն ալ պատասխանեց « թշնամի՞մը ցանած է » : — Ծառաներն ըսին, « Կ'ուզե՞ս որ որոմը գատենք », իսկ Տէրը ըսաւ, « Ո՛չ, որպէս զի չըլլայ թէ որոմը քաղելու ատեն ցորենէն ալ քաղած ըլլաք . թողէք ամին մէկտեղ մինչև հունձքի ատեն, այն ժամանակ քաղ ընողներուն կ'ըսեմ, առաջ որոմը քաղեցէք ու այրեցէք, յետոյ ցորենն ալ բերէք իմ ամբարիս մէջ լեցուցէք » :

Ժամուց, գանձանակ . — Կամաւոր (*) նուէր մ'է ժամուցը զոր ժողովուրդը օրուան ժամարարին (*) կուտայ խնդրելով որ՝ պատարագին մէջ

յիշէ զինքը ու իր մեռելները : Ժամուցը հաւաքելու համար գանձանակին շրջաբերումը (*) առաքեալներու դարէն (*) է և Մովսէսի ատենէն ալ՝ ծանօթ է չորեքդրամեան տուրքով (*) որ կայ Աւագ Հինդարթի օրը :

Ի՞նչ առակ պատմեց Յիսուս : — Յորենին քով ո՞վ որով ցանեց : — Երբ երեւցաւ որոմը : — Ինչո՞ւ չանուեցաւ որոմը : — Եթէ որոմը քաղուի ո՞ւր պիտի նետուի : — Ո՞վ է ցորենն, ո՞վ է որոմը : — Ժամուցը ի՞նչ է : — Ինչո՞ւ կը տրուի : — Ի՞նչ է գանձանակը : — Մովսէսի ատենէն ալ չկա՞ր :

35. ՀԱՅԻՆ ԲԱԶՄԱՅՈՒՄԸ (*)

Շատեր եկած էին Յիսուսի խօսքերը մտիկ ընելու : Յիսուս շատ ցաւեցաւ անոնց խեղճութեան վրայ որ անհովիւ ոչխարներու կը նմանէին : — Իր աշակերտներն ըսին, « Հոս անապատ է, տուն, չուկայ չկայ, զրկէ ժողովուրդը մօտակայ գիւղերը որ երթան հաց ճարեն իրենց » : Յիսուս ըսաւ, « Դուք հաց տուէք անոնց » : Աշակերտներէն մէկը ըսաւ, « տեղ մը հինգ հաց՝ երկու ձուկ կայ, բայց այսքան ժողովուրդին կը բաւէ » : — Յիսուս հրաման ըրաւ որ խոտերուն վրայ կարգաւ նստեցունեն ժողովուրդը որ հինգ հազար հոգի էին : Ետքը հացը ու ձուկը առնելով՝ օրհնեց ու աշա-

կերաններուն ձեռքով բաշխեց ժողովուրդին : Երբ կերան , կշտացան տասներկու կողով (*) կտորուանք վերցաւ կշտացողներուն առջեւէն :

Պնակ . — Պնակը կը պտըտցունեն ժողովուրդին մէջ հաւարելու այն նուէրները , որոնցմով աղքատին՝ հիւանդին՝ որբին՝ այրիին (*) և եկեղեցիին պէտքերը կը հոգացուին , շէնքի՝ զգեստի՝ անօթներու (*) նորոգութիւններ կ'ըլլան , եկեղեցիին պաշտօնեաներուն ծախքերուն կը արուին : Խունկի՝ ձէթի և մոմի համար իւղագին նուէր մ'ալ կայ Չատիկին :

Որո՞նց կը բաղդատէ Յիսուս մարդիկը որ զինքը մտիկ ընելու եկեր էին : — Այս ժողովուրդը ընդամէնը ի՞նչ ունէին ուսելիք : — Ի՞նչպէս հրաշք մը գործեց Յիսուս : — Պնակն ի՞նչ է : — Որո՞նց կը յատկացուի արգիւնքը : — Իւղագինն ի՞նչ է :

36. ՅԻՍՈՒՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ (*)

Յիսուս իր աշակերտներէն Պետրոսը՝ Յակովբոսը և Յովհաննէսը առնելով ելաւ բարձր լեռան մը վրայ և սկսաւ աղօթքի : Յանկարծ դէմքը այնպէս լուսաւորեցաւ որ արեւը մթնեց , զգեստները ձիւնէն աւելի ձերմկցան : — Հոն երեւցան Մովսէս և Եղիա մարգարէները որոնք Յիսուսի հետ կը խօսէին անոր չարչարանքին՝ մահուան ու յարութեան

վրայ : Պետրոս համարձակեցաւ Յիսուսի ըսել .
« Լաւ է մեզ , Տէր , հոս կենանք , և երեք տաղաւարներ կազմենք , մէկը Քեզի , մէկը Մովսէսի , մէկն ալ Եղիայի » : — Ասոր պատասխանը եկաւ երկինքէն . « Իա է իմ սիրելի որդիս , ատոր հաւնեցայ , ատոր մտիկ ըրէք » : Առաքեալները վախաւորով երեսի վրայ ինկած էին , բայց Յիսուս երբ արթնցուց զանոնք , տեսան թէ ոչինչ կար իրենց չորսդին ու սկսան վար իջնել լեռնէն :

Տաղաւար , ճրագալոյց . — Ծնունդը՝ Չատիկը՝ Այլակերպութիւնը , Վերափոխումն ու Խաչվերացը ասնելու համար հիները դեռ եկեղեցի չչինած՝ ամայի տեղեր կ'երթային և տաղաւարներու (*) կամ վրաններու տակ կ'աղօթէին , ճրագ վառելով մինչև առտու , ուրկէ կայ ճրագալոյցը (*) որուն նշմարն է Չատիկն « Լուսաւորեայ » ի մոմը եկեղեցիին մէջ , և Տեսառնընդառաջի երեկոյեան հրավառութիւնը (*) :

Յիսուս որո՞նց հետ ելաւ բարձր լեռան մը վրայ : — Ի՞նչ եղաւ հոն դէմքը , զգեստը : — Որո՞նք Յիսուսի հետ խօսեցան : — Պետրոս ի՞նչ ըսաւ : — Խնդիրքին պատասխանը ո՞րկէ եկաւ եւ ի՞նչ : — Ի՞նչ ըրաւ Յիսուս : — Որո՞նք տաղաւար կը կոչուին եւ ինչո՞ւ : — Ո՞րն է ճրագալոյցին մէկ նշմարը :

37. ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻՆ

Հրեայ գիտուն մը օր մը Յիսուսի հարցոց , ո՞վ ճանչնամ ինձի ընկեր : Յիսուս ըսաւ . Երիբոյժի ճամբուն վրայ գողերը անցորդ մը կողոպտեցին և վիրաւորելով կիսամահ թողուցին փախան— Հրեայ քահանայ մը ճամբէն անցնելու ատեն տեսաւ խեղճը ու չգլթաց : Աւետացի մ'ալ անկէց անցաւ ու չտեսնելու զարկաւ : Բայց սամարացի մը տեսնելով այդ մարդը , գլթաց ու վէրքը կապեց և իր հեծած գրաստին վրայ դնելով տարաւ պանդոկ մը ուր դարմանեց (*) և դեռ դարման և խնամք տանելու համար պանդոկապետին (*) վճարեց : — Յիսուս հարցոց « այս երեք ճամբորդներէն ո՞ր մէկը ընկեր եղաւ այդ վիրաւորին » : Գիտունն ալ ըսաւ , « Ինձի կուգայ թէ նա՞ որ ողորմեց » : Յիսուս ալ ըսաւ , « Գնա՛ դուն ալ անանկ ըրէ » :

Հսկում . — Այդ տաղաւարներու կամ վրաններու տակ գիշերը հանգիստ քնանալ կարելի չըլլար , գիշերը կը լուսցունէին անքուն (*), սաղմոսելով (*) համաճարակ (*) հիւանդութեանց՝ պաճարակտի (*) երաշտութեան (*) պատերազմի և ուրիշ չարիքներու հեռանալուն համար : Այսպէս լուսցունելուն հսկում և լուսցած օրին ակում (*) կ'ըսուի : Ս. Մեսրոպ ակումիտ (*) և Նարեկացին հսկող (*) էր :

Յիսուս հասկցնելու համար թէ ո՞վ է մեր ընկերը ի՞նչ առակ պատմեց : — Որո՞նք տեսան ճամբուն վրայ ինկած վիրաւորը : — Ո՞վ օգնեց և ի՞նչպէս : — Ի՞նչ պէտք է ընել մեր ընկերին : — Գիշերը ուխտաւայրներու մէջ ի՞նչպէս կ'անցունէին : — Որո՞նց համար աղօթք կ'ըլլար : — Ի՞նչ է հսկումը , ի՞նչ է ակում : — Ակումիտ մը և հսկող մ'ըսէք :

38. ՂԱԶԱՐՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Յիսուս երբ Բեթանիա երթար հիւր կ'ըլլար Մարթայի և Մարիամի : Ասոնց եղբայրը Ղազարոս օր մը հիւանդ էր , լուր զրկեցին Յիսուսի , « Տէր , Ղազարոսը զոր դուն կը սիրէիր , հիւանդ է » : — Երբ Յիսուս հասաւ , Ղազարոս արդէն չորս օրէ ի վեր թաղուած էր : Մարթան ըսաւ , « Տէր , եթէ հոս ըլլայիր՝ եղբայրս չէր մեռներ , բայց գիտեմ որ ինչ որ այժմ խնդրես Աստուծմէ՝ կ'առնես » : Յիսուս ըսաւ , « Եղբայրդ պիտի կենդանանայ » : — Յիսուս լացաւ : Ապա գնաց գերեզման որ քարայր (*) մ'էր քարէ կափարիչով գոցուած : Քարը ետ առին վրայէն : Յիսուս երկինք նայելով ըսաւ . « Հայր շնորհակալ եմ որ միշտ կը լսես ինձի » : Ապա կանչեց « Ղազարոս , դուրս ել » : Ու մեռելը եղաւ : Յիսուս ըսաւ . « Քակեցէք կապերէն մեռելը և թողէք որ քայլ » :

Սուրբ . — Սուրբ կ'ըսուին այն մարդիկը որ Աստուծոյ հաճելի (*) կերպով ապրած են , բարիք գործած են , անոր խօսքերը քարոզած են և քարոզելու ատեն թշնամիներէն սպաննուած են : Ասոնց սպաննուած՝ կամ մարմինին ամբողջին և կամ մէկ մասունքին (*) թաղուած տեղը՝ վկայաբան (*) կամ մատուռ (*) մը կը շինուէր ուր քրիստոնեաներ ուխտի կ'երթային :

Յիսուս որո՞նց հիւր կ'ըլլար Ռեթանիոյ մէջ : — Ղազարոս ի՞նչ էր և և ի՞նչ եղաւ Յիսուսը հասնելէ առաջ : — Ի՞նչ խօսակցեցան Մարթա և Յիսուս : — Յիսուս ի՞նչպէս աղօթեց գերեզմանի մօտ : — Աստուած ի՞նչպէս լսեց անոր աղօթքը : — Որո՞նք Սուրբ կ'ըսուին : — Ի՞նչ է մատուռը կամ վկայարանը :

39. ԱՌԱԿ ԿՈՐՈՒՍԵԱԼ ՈՉԻԱՐԻՆ

Յիսուս ըսաւ . Ձերնէ ո՞ր մէկը որ հարիւր ոչ խարէն մէկը կը կորսնցունէ , չի՞ ձգեր իննսուն ու իննը և փնտուեր մէկը , ու եթէ գտնէ՝ չի՞ կանչեր բարեկամներն ու ըսեր , « ուրախացէք ինձի հետ , ոչխարս գտայ » : — Շիտակ կ'ըսեմ , մեծ ուրախութիւն կ'ըլլայ երկինքին մէջ մէկին համար քան չմոլորած իննսուն իննին համար , մէկ մեղաւորին համար որ կը զղջայ քան իննսուն ինն արդարներուն համար որոնք զղջալու պէտք չունին :

Այսպէս Աստուած կ'ուզէ որ իր պղտիկներէն մէկը չկորսուի : — Յիսուս ըսաւ , ես բարի հովիւն եմ , կը ճանչնամ ոչխարներս , անոնք ալ զիս կը ճանչնան : Ես հոգի կուտամ ոչխարներուս համար : Ուրիշ ոչխարներ ալ ունիմ գուրսը , պիտի ըսեն ձայնս ու գան , պիտի ըլլան մէկ հօտ՝ մէկ հովիւ :

Տօճ . — Սուրբերուն մասունքները մինակ եկեղեցիներուն տակը չեն թաղուիր , այլ խաչի՝ ձեռքի՝ ոտքի ձեւով շինուած անօթներու մէջ կը դրուին : Սուրբերուն մեռած օրը յատուկ կը յիշատակուին անոնց աղէկ կողմերը , որուն տօնախմբութիւն (*) կ'ըսուի և նախատօնակը (*) կամ տօնի սկզբնաւորութիւնը առջի երեկոյին կ'ըլլայ .

Ի՞նչ կ'ընէ հովիւը կորսուած ոչխարը գտնելու համար : — Ի՞նչ բանի կը յարմարցունէ Յիսուս այս առակը : — Որո՞նք ինքզինք կը նմանցունէ Յիսուս : — Մասունքները ո՞ր կը դրուին դեռ : — Սուրբերու մեռնելու օրուան տարեգարծին ի՞նչ կ'ըլլայ : — Առջի իրիկունէ ի՞նչ կ'ընեն :

40. ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

Յիսուս պատմեց հետեւեալ (*) առակը (*) . Հայր մ'երկու զաւակ ունէր , կրտսերը (*) հօրմէն իրեն իյնալիք ժառանգութիւնը ուզեց՝ առաւ և տարաւ հեռի երկիր մը մսխեց (*) իր անառակ (*) ընկերներուն հետ : Երբ սպառեց (*), բոլոր բարե-

կամները պաղեցան իրմէն : Սով մ'ալ տիրեց և սկսաւ չքաւորիլ (*) : Արհեստ չունէր , խողարած եղաւ , բայց խողերուն կերած եղջիւրներուն (*) կարօտը կը քաշէր զորս կը խնայէին իրմէն : — Յանկարծ հարուստ հօրը ճոխ (*) տունը միայն ինկաւ ուր ծառաները հանգիստ կ'ապրէին : Դարձաւ հօրը և երբ տեսաւ հեռուէն լալով ըսաւ , « Հայր մեզայ Աստուծոյ և քու առջև , ալ որդիդ ըսուելու արժանի չեմ , զիս ծառաներէդ մէկը ըրէ » : Բայց հայրը գթաց՝ գրկեց համբուրեց և ներեց անառակին :

Խաչալուայ . — Սուրբերուն մահուան տարեգարծի օրը անոնց վրայ գրուած երգ՝ աղօթք ու շարական կ'երգուին , անոնց մասունքները ցոյց կը դրուին և խաչալուայ կամ խաչահանգիստ կ'ըլլայ : Քահանան երեք անգամ խաչակնքելով կ'օրհնէ և կը խառնէ շուրը՝ Պրոպատիկէ աւազանին շուրը հրեշտակը խառնելուն համար : Յետոյ անոնց օրհնութիւնը կը խնդրուի հիւանդներու բժշկութեան համար :

Յիսուս անառակ որդիով ո՞վ հասկցաւ : — Ո՞վ է հայրը : — Ի՞նչպիսի բարեկամներ են անառակին ընկերները : — Անառակը ե՞րբ գարծի եկաւ : — Հօրը ի՞նչ ըսաւ : — Հայրը լսե՞ց : — Ի՞նչ է խաչալուայն : — Ինչո՞ւ կ'ըլլայ եւ ե՞րբ :

2. ԱՄԻՍ

41. ԱՌԱԿ ՏՆՏԵՍԻՆ

Յիսուս առակ մ'ալ պատմեց : Հարուստ մը անտես մ'ունէր որ բոլոր հարստութեան գործերը կ'ընէր : Իմացաւ թէ իր անտեսը ինչքը (*) կը վատնէ (*), կանչելով ըսաւ . « Տներ հաշիւդ , ալ տընտես չես » : — Տնտեսը մտածեց , « Ի՞նչ ընեմ՝ երբ անտեսութենէ հանէ զիս , գործել չեմ կրնար , մուրալ կ'ամչնամ , այնպիսի բան մ'ընեմ որ երբ գործէս հանուիմ , ուրիշներ զիս կերակրեն իրենց տունը » : Ու կանչելով տիրոջ պարտապաններէն (*) մէկը , անոր հարիւր մար (*) ձէթի պարտքը յիսունի իջեցուց : Մէկ ուրիշին ալ հարիւր քոռ (*) ցորենի պարտքը ութսունի իջեցուց : — Յիսուս ըսաւ թէ անիրաւ անտեսը օրինակ առէք և ողորմութիւն տուէք : Տնտեսը իր ապագան մտածելով բարեկամ կը պատրաստէր այնպիսի հարստութեամբ մը որուն բուն տէրը մարդ մը չէ , այլ Աստուած միայն :

Պատկեր . — Սուրբի մը մահուան տարեգարծի (*) օրը եթէ սուրբին անունով վանք կամ ուխտ կայ մօտը , հոն կ'երթան : Թէ ոչ , անոր գծուած կամ նկարուած (*) պատկերը եկեղեցիին մէջ ի ցոյց կը դրուի (*) որպէս զի՝ ամէն մարդ տեսնէ

սուրբը և ինչ որ երգերը՝ շարականը՝ յայսմաւուրքը կը պատմեն կամ քարոզիչը կը բացատրէ, տը պաւորուի միտքի մէջ:

Տնտեսը ի՞նչ կ'ընէր: — Ինչո՞ւ պարտականներուն պարտքերը թեթեւցուց: — Յիսուս ինչո՞ւ հաւնեցաւ գող տնտեսին (*): — Սուրբին պատկերը ինչո՞ւ ի ցոյց կը գրուի եկեղեցիին մէջ, ե՞րբ: — Ինչե՞ր գրուած են, կ'երգուին:

42. ՄԵԾԱՏՈՒՆԸ (*) ՈՒ ԱՂՔԱՍԸ

Առակ մ'ալ ըսաւ Յիսուս: Ծանրագին (*) բեհեզներ (*) և ծիրանիներ (*) հագնող հարուստի մը տան առջև՝ աղքատ Աղաբոսը խոցոտ՝ վիրաւոր ինկած էր ու կարօտը կը քաշէր հարուստի սեղանի փշրանքին: Շուները անոր վէրքը կը լիզէին: — Աղաբոս մեռաւ ու տարուեցաւ հայր Աբրահամին գողը (*): Հարուստն ալ մեռաւ և երբ աչքը բացաւ՝ ինքզինքը դժոխքի տանջանքին մէջ տեսաւ և հեռուն ալ Աղաբոսը՝ Աբրահամու գիրկին մէջ: — Մեծատունը աղաղակեց, « Հայր Աբրահամ, ողորմէ ինձի և զոկէ Աղաբոսը որ մատին ծայրը ջուրով թրջէ և բերէ ծարաւս անցունէ »: Այն ատեն Աբրահամ պատասխանեց, « Որդեակ, յիշէ աշխարհի մէջ վայելքը և Աղաբոսին տանջանքը, նա այժմ կը մխիթարուի (*) հոս, դուն ալ կը պաղակիս (*) »:

Յայսմաւուրք. — Սուրբերուն ինչպէս ծնած՝ մեծցած՝ կրթուած՝ գործած ու սպաննուած կամ մեռած ըլլալու պատմութիւնը եկեղեցիին մէջ ժողովուրդին կը կարգացուի երեկոյեան ժամերգութենէն առաջ: « Յայսմաւուրք » բառերով սկսելուն Յայսմաւուրք կ'ըսուի: Այդ գիրքը առաջին անգամ գրելու սկսողը հայոց մէջ եղած է Գրիգոր վկայասէր (*) հայրապետը:

Մեծատունն ի՞նչ կ'ընէր, իսկ Աղաբոսը: — Երբ մեռան, ո՞ւր տարուեցան: — Մեծատունն ի՞նչ ըսաւ զժոխքի մէջէն: — Ի՞նչ պատասխան առաւ: — Սուրբերուն կեանքին վրայ ո՞ր գրքին մէջ գրուած է, ե՞րբ կը կարդացուի: — Ինչո՞ւ Յայսմաւուրք կ'ըսուի:

43. ՓԱՐԻՍԵՑԻՆ ՈՒ ՄԱՔՍԱԿՈՐԸ

Յիսուս պատմեց սա առակն ալ: Երկու մարդիկ տաճար գնացին աղօթելու համար, մին փարիսեցի (*) միւսը մաքսաւոր (*): Փարիսեցին կոկոզավիղ (*) կ'աղօթէր ինքն իրեն, « Աստուած իմ, շնորհակալ եմ քենէ որ չեմ աշխարհիս մէջ եղած մարդերէն որ յափշտակող՝ անիրաւ՝ շնացող են, ոչ ալ այս մաքսաւորին պէս եմ: Շարաթն երկու օր կը պահեմ, (*) ունեցածիս տասանորդը (*) կ'ուտամ »: — Մաքսաւորն ալ հեռուն կ'ծկտած՝ աչքերը վեր չէր վերցուներ, կուրծքին կը զարնէր ու կ'ըսէր, « Աստուած ներէ ինձի որ մեղաւոր եմ »:

— Յիսուս այս առակը պատմելէն ետքը աւելցուց , «Կ'ըսեմ ձեզի, այս վերջինը արդարացած և մեղքէն սրբուած գնաց սուներ քան թէ փարիսեցիին . վասնզի ով որ ինքզինքը կը բարձրացունէ՝ կ'իյնայ , և ով որ կը խոնարհի՝ կը բարձրանայ » :

Յարգանք պատկերներու . — Երբ մոմ կը վառուի պատկերի մ'առջեւ՝ զինքը ցուցունելու համար է , երբ խունկ կը ծխեն , անոյշ հոտելու համար , և ոչ թէ իր կուռք (*) պաշտելու համար : Եթէ մեր տան բարեկամներու պատկերները կը յարգենք , իրենց լաւ յիշատակին համար , ինչո՞ւ Քրիստոսի բարեկամներուն պատկերները չյարգենք , նոյն պատճառաւ :

Ով էին երկու աղօթողները : — Փարիսեցին ի՞նչպէս կ'աղօթէր , և ի՞նչ կ'ըսէր : — Մաքսաւորն ի՞նչպէս կ'աղօթէր և ի՞նչ կ'ըսէր : — Յիսուս ո՞ր մէկին համար կ'ըսէ թէ արդարացած է և ինչո՞ւ : — Ի՞նչպէս կը յարգենք սուրբերուն պատկերները : — Ինչո՞ւ :

44. ՅԻՍՈՒՍ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Ժողովուրդը որ մը պզտիկ մանուկներ տարաւ Յիսուսի որ օրհնէ : Աշակերտները թող չտունին : Բայց Յիսուս ըսաւ . « Մի՛ արգիլէք ատոնք , թող գան ինձի , վասն զի Աստուծոյ արքայութիւնը ասոնց նմաններուն է : Ով որ այդ տղոց պէս ան-

մեղ չլլար , երկնքի արքայութիւնը չմաներ » : — Յիսուս այդ լսելէն ետք՝ գիրկը առաւ մանուկները , ձեռքը անոնց գլխուն դրաւ ու օրհնեց : — Աշակերտները հարցուցին թէ արքայութեան մէջ ո՞վ է ամենէն մեծը : Տղայ մը կեցուց անոնց առջև ու ըսաւ , եթէ չգտունար չըլլաք այս պզտիկին պէս , երկնքի մէջ տեղ պիտի չունենաք : Ով որ այս պզտիկներէն մէկը կ'ընդունի իմ անունովս , զիս ընդունած կ'ըլլայ : Վայ (*) այն մարդուն որ այս տղոց աչքէն կ'իյնայ :

Օծում պատկերի կամ խաչի . — Քրիստոսի խաչին նշանը (*) և սուրբի մը պատկերը այն ատեն կը յարգուին եկեղեցիին մէջ երբ երկիւղած (*) մարդոց ձեռքով պատրաստուելէ ետք գինիով կը սրբուին , աղօթքներով ու երգերով Աստուծոյ կը նուիրուին և միւռոնի Սուրբ խղով կ'օծուին՝ եկեղեցիին մէջ՝ պաշտօնեայներուն մեծէն :

Ի՞նչ ըսաւ Յիսուս երբ իրեն պզտիկ մանուկներ տարին : — Ի՞նչ ըրաւ անոնց : — Ի՞նչ պէտք է ընել երկնքի մէջ ընդունուելու համար : — Խաչին նշանը կամ սուրբերուն պատկերները երբ կ'ընդունուին եկեղեցիին մէջ և կը յարգուին :

45. ԱՆՄԻՏ ՀԱՐՈՒՍՏԸ

Առակ մ'ալ պատմեց Յիսուս : Հարուստի մը արտերը շատ բերք տուին և ինքնին կ'ըսէր . « Ի՞նչ ընեմ, բերքս դնելու տեղ չկայ » : — Յետոյ ըսաւ . « Հա՛ միտքս ինկաւ , քակեմ շտեմարաններս ու աւելի մեծեր շինեմ ուր ժողովեմ բոլոր բերքերս ալ , ետքը ըսեմ ես ինձի . Իմ անձս (*), դուն շատ հարստութիւն ունիս , շատ տարիներու կը բաւէ , հանգչէ կեր խմէ և ուրախ եղիր » : — Բայց Աստուած անոր ըսաւ . « Անմիտ (*), այս գիշեր հողիդ քենէ պիտի ուզուի , և ինչ որ ժողվեցիր՝ որո՞ւն պիտի ըլլայ » : — Այսպէս պիտի ըլլայ այն մարդուն որ հարստութիւն կը գիզէ իր անձին համար և որ Աստուծոյ համար հարուստ չէ : Յիսուս ըսաւ . « Մի գիզէք երկրի վրայ գանձ ուր ցեցը (*) կ'աւրէ և գողը կը տանի , այլ ձեր գանձը երկնքի մէջ թող ըլլայ ուր ոչ ցեց կայ և ոչ գող » :

Տօնախմբութիւն . — Սուրբի մը մահուան տարեդարձի յիշատակը (*) եկեղեցիին մէջ տօնուած ատեն երբ ծնունդ լինի , նորածինին կը դնեն սուրբին անունը որ քանի տօնուի , անոր անուանակիցը (*) կը շնորհաւորեն բարեկամներ և կը մաղթեն որ սուրբին բարի կողմերը ունենայ և հետեւի անոր : Այս շնորհաւորութիւնը կերպով մը անոր ծնած օրուան է :

Հարուստը իր արտերուն հունձքը տեսնելով ի՞նչ կ'ըսէր : — Աստուած անոր ի՞նչ պատասխանեց : — Ո՞վ Աստուծոյ համար հարուստ չէ : — Գանձը ո՞ւր գիզելու է և ինչո՞ւ : — Տղայոց անունները շատ անգամ ի՞նչ կը դրուին : — Ի՞նչ է անուան շնորհաւորութիւնը :

46. ՅԻՍՈՒՍ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ ՄԷՉ

Յիսուս Երուսաղէմի մօտ իր աշակերտներէն երկուքը զրկեց մօտակայ գիւղ մը կապուած էջ մը բերելու՝ որուն վրայ մարդ նստած չէր : Պատուիրեց որ եթէ մէկը հանդիպի ու հարցունէ՝ ըսեն , « Տէրը կուգէ » : Ու խկոյն թող պիտի տայ որ բերին : — Անուրալ արուած նշաններուն համաձայն (*) գնացին գտան և բերին էջը որուն վրայ իրենց հագուստները փռելով հեծցուցին Յիսուսը : — Շատեր իրենց հագուստները , ուրիշներ ծառերու ճիւղեր տարածեցին (*) ճամբուն վրայ : Ետեւէն ու առջևէն գացողները կ'աղաղակէին (*) « Ով սաննա (փրկիչ) , օրհնեալ ըլլաս որ Տէրոջը անունովը եկար » : Ու երբ Երուսաղէմ մտաւ , բոլոր քաղաքը դղրեցաւ , ամէն մարդ կ'ըսէր . « Յիսուսն է , նազարէթի Մարգարէն է » :

Նախասօնակ . — Հիները օրուան սկիզբը առջի իրիկուրնէ կը սեպէին : Ասկէ է որ կիրակամուտ կ'ըսուի շաբաթ երեկոյ և « Լոյս զուարթ » կ'եր-

գուի իբր երկրորդ օրուան սկզբնաւորութիւն : Տօներն ալ առջի իրիկուրնէ կը սկսին, և երգեցողութիւններ ու արթթներ կ'ըլլան իբր սկսուած օրուն նախատօնակ կ'ըսեն ուրկէ վառած մամուլ տուն երթալով կը վառէին տանը ճրագը :

Յիսուս Երուսաղէմ մտնելէ առաջ ի՞նչ հրաման ըրաւ աշակերտներուն : — Յիսուսի համար ի՞նչպէս բերին էջ մը : — Ի՞նչպէս և ի՞նչ աղաղակներով ընդունեցին Յիսուսը : — Ո՞րն է օրուան սկիզբը : — Կիրակամուան ի՞նչ է : — Ի՞նչ է նախատօնակը :

47. ՄԵՍ ԿՈՉՈՒՆՔԸ

Յիսուս ըսաւ . Մարդ մը մեծ կոչունք (*) մը տուաւ և շատեր հրաւիրեց : Սեղանի ատեն ծառան զրկեց հրաւիրեալներուն ըսելու, եկէ՛ք, ամէն ինչ պատրաստ է : Բայց կարծես ամէնքը խօսքերնին մէկ ըրած՝ սկսան հրաժարիլ (*) : — Առաջինը ըսաւ . «Արտ մը գնեցի, պիտի երթամ տեսնեմ, ներողամիտ եղի՛ր չգալուս» : Մէկը ըսաւ . «Հինգ լուծ (*) եղ գնեցի, պիտի երթամ փորձելու զանոնք, կ'աղաչեմ, եթէ չգամ՝ ներեցե՛ք» : Ուրիշ մը ըսաւ . «Կարգուեցայ, չեմ կրնար գալ» : — Ծառան իմացուց Տիրոջը որ բարկացած ըսաւ . Գնա հրապարակ (*) ու փողոց, և բեր աղքատը՝ կոյրը՝ կաղը : Ծառան դառնալով ըսաւ . Հրամանդ

ըրի ու դեռ պարապ տեղ կայ : Տէրը ըսաւ . «Գնա ճամբուն վրայ դսածդ բեր որ լեցուի տունս, ճշմարիտ կ'ըսեմ՝ կանչուածներէն մէկը պիտի չուտէ սեղանէս» :

Թափօր, Անդասան . — Երբեմն օրուան հանդէսին փայլը աւելցընելու համար՝ զգեստով ատեան (*) կ'երնեն երգելու : Թափօր (*) կ'ըսենք երբ դառնան ժողովուրդին մէջ նուէրը հաւաքելու համար պատարագին : — Երբ աշխարհիս չորս կողմը՝ ժողովուրդը՝ հայրապետը՝ արտերը և վանքերը օրհնելու համար դառնան, անդաստան (*) կ'ըսուի :

Կոչունքի տէրն ի՞նչ ըրաւ : — Ինչո՞ւ չեկան : — Տէրը ի՞նչ հրաման ըրաւ ծառային : — Գեռ ի՞նչ և ինչո՞ւ : — Եկեղեցիին մէջ պաշտօնեայնեան ինչո՞ւ ատեան կ'երնեն : — Ի՞նչ է Թափօրը : — Ի՞նչ է անդաստանը :

48. ՎԵՐՁԻՆ ԸՆԹՐԻՔԸ

Յիսուս Պետրոսն ու Յովհաննէսը զրկեց Երուսաղէմ՝ որ Զատիկուան գառը պատրաստեն : Յիսուս ըսաւ . «Երբ քաղաք մտնէք՝ ձեր դէմը կ'երնէ մարդ մը սափօրը (*) ուսին վրայ : Անոր մտած տանը տէրը ցոյց պիտի տայ զարդարուած վերնատուն (*) մը, հոն կ'ուտենք գառը» : — Անոնք ալ գնացին ու մարդը հանդիպեցաւ իրենց ու Յիսուսի ըսածին պէս ըրին ու պատրաստեցին ամէն ինչ : Ընթ-

րիքի ժամուն Յիսուս իր առաքեալներուն հետ սեղան նստաւ : — Առաւ հացը՝ շնորհակալ ըլլալով Աստուծմէ, կարեց բաշխեց ու ըսաւ . «Առէք, կերէ՛ք այս է մարմինս» : Յետոյ բաժակը (*) առնելով շնորհակալ եղաւ Աստուծմէ և տուաւ աշակերտներուն ըսելով . «Իմեցէք ասկէ, այս է անրիւնս» : «Ասիկա ըրէք իմ յիշատակիս համար ու մահս պատմեցէք» :

Զատիկ . — Եգիպտոսի դերութենէն (*) ազատելու օրը հրեայները գառ մը կերան : Քրիստոս ալ կերաւ բայց ուզեց որ մարդիկ մեղքի դերութենէն ազատուին ուստի իր մարմինը ու արիւնը տուաւ ընթրիքի մէջ ու պատարագուեցաւ խաչին վրայ որուն համար պատարագիչը կ'ըսէ ժողովուրդին . «Յիշեալ ըլլաք առաջի անմահ գառին Աստուծոյ» :

Յիսուս երբ հաղորդութեան խորհուրդը հաստատեց : Ի՞նչ կ'ուտին այդ օրը : — Ի՞նչ ըսաւ Յիսուս հացը տուած ատեն : — Ի՞նչ ըսաւ բաժակը տուած ատեն : — Հրեայները երբ գառը կերան : — Քրիստոս երբ գառը կերաւ : — Ի՞նչ ուզեց ըսել հայն ու գինին տալով : — Ժողովուրդն ի՞նչ կը խնդրէ Պատարագիչէն :



Է. ԱՄԻՍ

49. ՈՏՆԱԼՈՒԱՅ

Ընթրիքի սեղանը դրուած էր երբ Յիսուս ոտքի ելնելով հանեց զգետաները՝ զենջակ (*) մը մէջքը կապեց և ջուր լեցնելով կոնքին մէջ սկսաւ լուալ աշակերտներուն ոտքը : — Երբ կարգը Պետրոսին եկաւ, ամչցաւ ու թող չտուաւ, բայց Յիսուս ըսաւ . «Եթէ օտաներդ չլուամ, ինչ մաս ու բաժին չես ունենար» : Այն ատեն Պետրոս ըսաւ . «Եթէ այդպէս է, ոչ միայն ոտքերս այլ ձեռքս ու գլուխս ալ լուամ» : — Ոտնալուայէն ետք սեղան նստելով Յիսուս ըսաւ . «Գիտէ՞ք ինչ ըրի, դուք ինձի վարդապետ ու Տէր կ'ըսէք : Եթէ ես վարդապետ ու Տէր ըլլալովս ձեր ոտքը լուացի, դուք ալ պարտաւոր էք իրարու ոտք լուալ : Օրինակ մը տուի, ինչ որ ես ձեզի ըրի, նոյնը դուք իրարու ըրէք» :

Օծում . — Հայ եկեղեցին միայն ունի Աւագ Հինգշաբթի երեկոյին օտնալուայն : Եկեղեցականներուն մեծը զենջակ կապած կը լուայ ամենուն ոտքերը խոնարհութեան դասը (*) տալու համար : Յետոյ ինչպէս կին մը օր մը Քրիստոսի ոտքը օծեց (*), անոնց ոտքը կ'օծէ անոյ՛ իւղով որ կերպով մը հիմակուան անոյ՛ վարդեջուրի տեղ էր :

Ի՞նչ ըրաւ Յիսուս : — Պետրոս ինչո՞ւ հակառակեցաւ : — Ի՞նչ ըսաւ Յիսուս : — Ինչո՞ւ լուաց Յիսուս : — Ո՞ր եկեղեցին ունի ոտնալուսայի սուղորութիւնը : — Ինչո՞ւ ոտքերը կ'օժեն օրհնած իւզով : — Ի՞նչ բանի նշան է :

50. ՅՈՒԴԱՅԻ ՄԱՏՆՈՒՅԻՒՆԸ

Յիսուսի տասներկու աշակերտներէն մին էր Յուզա որ արծաթասիրութեան (*) համար գնաց հրեայներուն մեծերուն մասնեց Յիսուսը : Անոնք ալ երեսուն կտոր արծաթ տուին : — Ընթրիքի երեկոյին՝ մութին՝ Յուզա հեար առած բիրերով (*) թուրերով (*) զինուած բազմութիւն (*) մը եկաւ : Պատուիրեց որ համբուրած մարդը բռնեն . նա է Յիսուսը : Ու յառաջ անցնելով բարեւեց ու համբուրեց Յիսուսը զոր բռնեցին : — Յիսուս ըսաւ այդ մարդոց . «Ես աւազակ եմ որ սուրերով՝ բիրերով եկած էք իմ վրայ : Ամէն օր ձեզ հետ էի, ինչո՞ւ չբռնեցիք» : Ան ատեն բոլոր աշակերտները թողուցին փախան : Իսկ Յուզա մատներուն վրայ զոյճաց և երեսուն կտոր արծաթը հրեայ քահանաներուն դարձուց ու գնաց կախուեցաւ :

Անդան . — Պատարագը կը մատուցուի Սեղանի վրայ որ հաստատուած ըլլալու է օժեալ քարի մը վրայ որ վէճ կ'ըսուի : Սեղանին վրայ անհրաժեշտ (*) է որ գտնուի Աւետարան մը, խաչ մը և

պատկեր մը որ միշտ կը լինի Ս. Աստուածածնի կամ այն սուրբին որուն վրայ կամ որուն անունով շինուած է Սեղանը : Մոմը պարզ ըլլա տալու համար է :

Ո՞վ մասնեց Յիսուսը և ո՞րչափ արծաթի : — Յուզայի ընկերները ի՞նչ նշանով ճանչցան Յիսուսը : — Ի՞նչ ըսաւ Յիսուս : — Ի՞նչ ըրաւ Յուզա իր չարութեանէն ետք և ի՞նչպէս մեռաւ : — Սեղան մը ի՞նչպէս կը կազմուի : — Ի՞նչ պէտք են սեղանին համար : — Մոմը ի՞նչ է :

51. ՅԻՍՈՒՍԻ ՉԱՐՉԱՐԱՆԲԸ

Յիսուսը տարին Աննայի առջեւ որ հարցումներ ըրաւ աշակերտներուն ու քարոզներուն վրայ : Յիսուս ըսաւ . «Ես գաղտնի չխօսեցայ, այլ ամենուն առջեւ : Լսողներուն հարցուր, ոչ թէ ինձի» : Անոր վրայ ծառայ մը ապտակեց . «Ասանկ պատասխան կուտան քահանայապետին» : Յիսուս ըսաւ . «Ինչո՞ւ կը զարնես, ծո՞ւռ խօսեցայ» : — Կայ յիսուսի տարին որ ըսաւ . «Յանուն Աստուծոյ, ըսէ, Գրիստոսը՝ Աստուծոյ որդի՞ն ես» : Յիսուս ըսաւ . «Ի՞նչ ալ կ'ըսես թէ եմ» : Նա պատուելով զգետը՝ քովիններուն ըսաւ . «Ահա լսեցիք թէ հայհոյեց, ի՞նչ կ'ըսէք հիմա» : «Մեռցնելու է», ըսին : — Անկէ Պիղատոսի տարին որ ուզեց աղատել, բայց ամէնքը պոռացին . «Խաչէ» : Ան ալ

Տեճել տարով Յիսուսը՝ յանձնեց անոնց որ փուշ պսակ մը դրին գլուխը, ծիրանի հագուցին և ըսին. «Բարեւ, հրէից Արքայ» :

Հոգեհանգիստ . — Աղօթքներ կ'ըլլան ննջեցեալի մը կամ շատ ննջեցեալներու վրայ, Աստուծոյ գթութիւնը խնդրելու անոնց հոգիին հանգիստին համար : Այս աղօթքները կ'ըլլան ամէն օր՝ աւելի հինգ տաղաւարներու երկրորդ օրը որ «մեռելոց» կ'ըսուի, ննջեցեալին այգուցին (*), եօթներէրին (*), քառասունըին (*) ու տարեկիցին (*), թէ եկեղեցիին և թէ գերեզմանատունին մէջ :

Յիսուս նախ որո՞ւ առջեւ հանեցին : — Ի՞նչ ըրաւ Կայիափա երբ Յիսուսէ իմացաւ թէ Քրիստոսն է : — Ի՞նչ ուզեց ընել Պիղատոս : — Ի՞նչ պատիժ տուաւ Յիսուսի : — Ի՞նչ ըրին զինուորները Յիսուսի : — Ի՞նչ ո՞ւ աղօթքներ կ'ըլլան ննջեցեալի մը վրայ : — Ո՞ր օրերուն մէջ մասնաւոր կերպով :

52. ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

Զինուորները Սիմոն Կիւրենացին կանչեցին որ Յիսուսի խաչը հանէ Գողգոթայի լեռը : Հոն Յիսուսը խաչին գամեցին (*) ու տնկեցին խաչը : Վիճակ (*) ձգելով զգետները բաժնեցին : — Յիսուսի գլխուն՝ խաչին վրայ՝ տախտակ մը դրին ուր Պիղատոս գրեց թէ «Յիսուս Հրէից Թագաւոր» ըլլա-

լուն համար խաչուեցաւ : Հրեայները գանգաւեցան . «Թագաւոր մի գրեր» : Իսկ Պիղատոս ըսաւ . «Ինչ որ ներսէս եկաւ՝ գրեցի» : — Յիսուսի աջ ու ձախ կողմերը երկու աւաղակներ խաչուեցան : Մէկը կը ծաղրէր Յիսուսը, միւսն ալ կը մեղադրէր իր ընկերը ու կ'ըսէր . «Աստուծոյ չե՞ս վախնար, մեկը մեր յանցանքին պատիժը կը քաշենք, իսկ սա՛ արդար է» : Յիսուսի ալ ըսաւ . «Յիչէ զիս արքայութեանդ մէջ» : Յիսուս ըսաւ . «Այսօր հետս դրախտին մէջ եմ» :

«Սուրբ Աստուած» . — Յովսէփ Արեմաթացին Յիսուսի մարմինը խաչէն վար առնելու ատեն ծոնկի գարով բաղկատարած (*) աղօթեց «Սուրբ Աստուած, Սուրբ և հզօր, Սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր (մեզի համար), ողորմե՛ս մեզ (ողորմէ մեզ)», «Հայր մեր»էն ետքը առաջին աղօթքն է այս զոր առաքեալները ամէն կողմ տարածեցին :

Ո՞վ օգնեց Յիսուսի խաչը տանելու : — Որո՞նք խաչուեցան Յիսուսի հետ : — Աւաղակներէն մին ի՞նչ խնդրեց և ի՞նչ պատասխան տուաւ Յիսուսէն : — Յովսէփ Արեմաթացին ի՞նչ ըրաւ ու ըսաւ Յիսուսի մարմինը խաչէն վար առնելու ատեն : — Որո՞նց միջոցաւ այդ աղօթքը տարածուեցաւ :

53. ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ:

Յիսուս իր հօրը ձեռքը աւանդեց հողին : Երեկոյին Յովէփ Արեմաթացին և Նիկողեմոս իշխանը Պիղատոսէն հրաման առնելով՝ Տիրոջ մարմինը թաղեցին վիմափոր (*) գերեզմանին մէջ որուն բերանը փակեցին կափարիչով մը : — Կիրակի առաոուն Մարիամ Մագթաղենացին և ուրիշ կիներ գերեզման գնացին Փրկիչին մարմինը խնկելու և օծելու : Կափարիչը ետ առնուած էր, ներս մտան ու չգտան մարմինը : ձերմակ հազուած երկու հոգի ըսին . «Հոս չէ, յարեա՛ւ, եկէ՛ք տեսէք թաղուած տեղը ու շուտ գնացէ՛ք աշակերտներուն ըսէք թէ յարեա՛ւ.» : — Յիսուս յարութենէն ետք առասուն օր իր մարդոց երեւցա՛ւ խօսեցաւ, կերաւ՝ խմեց : Ապա աշակերտները Բեթանիա տանելով Յիսուս ձեռքը բացած՝ օրհնեց ու գեռ կ'օրհնէր՝ երկինք համբարձաւ (*) և ամպ մը ծածկեց :

Չասկական հաւկիթ . — Հաւկիթը երբ դեռ հում է՝ անշունչ (*) անկենդան (*) կ'երեւի, բայց կենդանիի մը սաղմը (*) ունի մէջը : Երբ դրուի թուխս՝ կեղեւը կը կտարի և կենդանին մէջէն կ'երնէ ողջ : Քրիստոս ալ գերեզմանին մէջ իբր մեռել թաղուած էր՝ բայց կենդանի էր, և կափարիչը բանալով յարութիւն առաւ ողջ ձագին պէս : Այս խորհրդով Չատկին հաւկիթ կը զարնեն՝ կը նուիրեն, կարմիր ներկելով, կ'ուտեն :

Ո՞վ թաղեց Յիսուսի մարմինը և ո՞ւր : — Իւղաբեր կիները ինչո՞ւ գերեզման կ'երթային : — Ի՞նչպէս իրենց ըսուեցաւ թէ Յիսուս գերեզմանը չէ : — Յարութենէն քանի՞ օր ետք համբարձաւ երկինք և ո՞ր տեղէն : — Քրիստոսի յարութեան հետ ի՞նչ կապ ունի հաւկիթը : — Ինչո՞ւ Չատկին հաւկիթ կը զարնեն, սեղանին վրայ հաւկիթ կը գտնուի՞, նուէր կուտա՞ն :

54. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԱԼՈՒՍԸ (*)

Համբարձումէն տասն օր ետք՝ Պենտեկոստէի (*) տօնին՝ աշակերտները ժողովուած կ'աղօթէին, յանկարծ սաստիկ քամիի մը ձայնին պէս աղմուկ մը փրթաւ երկինքէն : Ամէնքը տեսան թէ մէյ մէկ բոցեղէն (*) լեզու իրենցմէ ամէն մէկուն վրայ եկած կեցած է : Սուրբ Հոգին էր զոր Յիսուս խոստացեր էր զրկելու անոնց որպէս զի ոգեւորին (*) ու քարոզեն աշխարհի : — Աշակերտները սկսան օտար ու անծանօթ լեզուներ խօսիլ ինչպէս որ Ս. Հոգին կ'ուզէր, և քարոզեցին Աւետարանը մարդոց : Անոնք որ սրտանց ընդունեցին անոնց քարոզութիւնը, մկրտուեցան : — Այն օրը երեք հազար հոգի գարձան որք սկսան քարոզ մտիկ ընել՝ հաղորդուիլ և աղօթել : Ամէնքը մէկ սիրա՛ մէկ հոգի էին, իրենց ունեցածը ամենուն կը բաժնէին, աղքատ չկար :

Պասարազ . — Առարեալները կիրակի օրերը

կը հաւարուէին տեղ մը ժողովուրդին հետ և Ս. Գրքը կը կարդային և խրատներ կը հանէին ամէնուն որ բարի ըլլան և չգործեն մեղք որ Աստուծոյ հրամաններուն դէմ շարժելուն կ'ըսուի : Յետոյ իրենց միաբանութիւնը հասկըցնելու և Գրիստոսի հետ կապուելու համար Պատարագէն կը հաղորդուէին :

Ի՞նչ պատահեցաւ Պենտեկոստէի օրը : — Մէկ օրուան մէջ ո՞րչափ ժողովուրդ Առաքեալներուն ձեռքով դարձի եկան : — Ի՞նչ կ'ընէին այն ատեն Քրիստոնէայները : — Կիրակի օրերը ի՞նչ կ'ընէին : — Մեղքը ի՞նչ է : — Պատարագը ե՞րբ կը մատուցուէր : — Հաղորդուելով ի՞նչ բան կը հաստատէին :

55. ԱՏԵՓԱՆՈՍ ՍԱՐԿԱԻԱԳ

Այդ հաւատացեալներուն մէջէն Ստեփանոս սարկաւագը (*) շատ լաւ կը քարոզէր Քրիստոսը հրեայներուն, հրաշքներ կը գործէր և մարդ անոր խօսքերուն պատասխան չէր գտներ : — Դատի քաջեցին ըսելով թէ Աստուծոյ ու Մովսէսի դէմ կը խօսի : Երբ կը դատէին՝ ներկայները անսան թէ անոր դէմը հրեշտակին դէմքին կը նմանէր : Ստեփանոս ըսաւ անոնց . «Մեր մեռնող հայրերուն կը նմանիք : Ո՞ր մարդարէն չհալածուեցաւ և չսպաննուեցաւ անոնցմէ : Այդ մարդարէները գուշակե-

ցին թէ պիտի դայ Արդարը որուն սպաննողը դուք եղաք» : — Հրեայները կատղեցան : Ստեփանոս Ս. Հոգիով լեցուած ու աչքը երկինք անկած՝ ըսաւ . «երկինքը բայ կը տեսնեմ՝ և Յիսուս ալ Աստուծոյ աջ կողմը» : Հրեայները քաղաքէն հանելով քարկոծեցին (*) :

Եկեղեցւոյ մասերը . — Սեղանը կը մնան և կը կատարուին ամէն սրբութիւնները, հոն սարկաւագներէն վեր եղածները մինակ՝ կ'երենն՝ զգեստով : Դասը կ'աղօթեն դպիրներէն վեր եղածները ուր ժողովուրդը հաղորդուելու ատեն միայն կը մտնէ : Այրերը կ'աղօթեն դասէն դուրս, կիները վերնատունին մէջ, իսկ ապաշխարողները գաւթի թին մէջ :

Ի՞նչ էր Ստեփանոս և ի՞նչպէս դատապարտուեցաւ : — Ի՞նչ տեսնուեցաւ անոր դէմքին վրայ : — Ի՞նչ խօսեցաւ դատաւորներուն առջեւ : — Ի՞նչպէս մեռաւ : Ի՞նչ եղան իր վերջին խօսքերը : — Ո՞րն է սեղանը : — Ո՞րն է դասը եկեղեցիին մէջ : — Ո՞ւր կ'աղօթեն այրերը : — Ո՞ւր կիները և ապաշխարողները :

56. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Տարսնցի Սաւուղ՝ Քրիստոնէայները հալածելու համար Դամասկոս (*) գնաց : Ճամբան երկինքէն կայծակի պէս լոյս մը ծագեց իր չորս դին(*) :

Գետին ինկաւ , կուրցաւ , ձայն մ'ալ լսեց . «Սա-
 ւուղ , ինչո՞ւ կը հալածես զիս» : Սաւուղ հարցուց .
 «Դու ո՞վ ես , Տէր» : Չայնն ալ ըսաւ . «Ես Յի-
 սուան եմ , գնա՛ . քեզի Դամասկոսին մէջ տրուելիք
 պատուէրին համաձայն վարուէ» : — Այդ օրէն
 Սաւուղ Քրիստոնեայ եղաւ : Պօղոս կոչուեցաւ :
 Հեթանոսներու (*) մէջ Աւետարանը քարոզեց , երեք
 անգամ ճամբորդելով և միւս առաքեալներուն
 դէմ հեթանոսները պաշտպանեց , ուստի կոչուե-
 ցաւ հեթանոսներու Առաքեալ : — Խորանակար (*)
 էր , հալածուեցաւ հրեայներէն և կը սպաննուէր
 եթէ Հռովմի կայսեր չբողոքէր : Հռովմի մէջ նա-
 հատակուեցաւ (*) :

Աւետարան , Գործք Առաքելոց , Թուղթեր . —
 Չորս Աւետարանները գրած են Մատթէոս , Մար-
 կոս , Ղուկաս և Յովհաննէս՝ Քրիստոսի երկրաւոր
 կեանքին վերջին մասին վրայ : Գործք Առաքելոցը
 առաքեալներուն գործերուն վրայ գրուած մ'է :
 Թուղթերը առաքեալները գրած են այս ու այն
 քաղաքի Քրիստոնեայներուն : Այս Ս. Գրքին նոր
 ուխտն է :

Ի՞նչ կ'ընէր Սաւուղ : — Ի՞նչ պատահեցաւ Դա-
 մասկոսի ճամբուն վրայ : — Ի՞նչ կոչուեցաւ : — Աւե-
 տարանը որո՞նց քարոզեց : — Ուստի ի՞նչ ըսուեցաւ : —
 Արհեստն ի՞նչ էր : — Ի՞նչ նեղութիւն քաշեց : — Ո՛ւր
 մեռաւ : — Ո՞վ գրած են Աւետարանները : — Գործք
 Առաքելոցը ի՞նչ է : — Թուղթերը ո՞վ և որո՞նց գրած են :

ԿՐՕՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆ

Ա. ԱՄԻՍ

Ի. ՆԱԽԱԾՆՈՂՔ

Աստուած վեց օրուան մէջ ստեղծեց(*) եր-
 կինքը՝ երկիրը՝ ծովը ու անոնց մէջ եղած բաները :
 Հողէն ալ ստեղծեց առաջին մարդը Ադամ՝ ու
 առաջին կինը Եւա որոնց հողի տուաւ և որոնք
 իր պատկերը ու կերպարանը ունեցան : Աստուած
 եօթներորդ օրը հանգիստ ըրաւ : — Աստուած
 Ադամն ու Եւան դրաւ գեղեցիկ պարտէզի մը մէջ
 որուն Դրախտ կ'ըսենք , և անոնց կերակուրի հա-
 մար ցոյց տուաւ պարտէզին բոլոր պտուղները ,
 բացի մէկ ծառէն՝ որուն անունն էր բարին չարէն
 զատելու ծառ : Բայց Եւան այս ծառոյն պտուղին
 սեւրքին հաւնելով և խաբուելով առաւ կերաւ ու
 Ադամին ալ կերցուց : — Աստուած անոնց անհնա-

զանդութիւնը տեսնելով վաճառեց դրախտէն :
Յետոյ օրէնք դրաւ որ անոնք հողը մշակեն ու
իրենց ճակատին քրտինքովը ապրին : Եւ մեծ յան-
ցանքը պատժելու համար ալ մեզը զրկեց աշ-
խարհ , որպէս զի մարդ անմահ չմնայ :

Կիրակի . — Աստուած օրհնեց՝ սրբեց ու
պահեց հանգիստի օրը որ շաբաթ էր , բայց առաջ-
եաներուն ձեռքով փոխուեցաւ կիրակի(*) օրուան՝
Յիսուս այդ օրը յարութիւն առնելուն համար :
Կիրակի հանգստեան օր է՝ քաշուելու աշխարհի
գործերէ՝ առեւտուրէ՝ շահէ՝ խաղէ՝ դրօսանքէ :
Հոգեւոր օր է եկեղեցի երթալու՝ քարոզ լսելու՝
աղօթելու :

Քանի՞ օրուան մէջ ստեղծեց Աստուած աշխարհը : —
Եօթներորդ օրը ի՞նչ կոչուեցաւ : — Ի՞նչ կոչուեցան
առաջին մարդն ու առաջին կինը եւ ի՞նչպէս կազմուե-
ցան : — Աստուած ո՞ւր դրաւ զիրենք : — Ի՞նչպէս
խաբուեցան : — Ի՞նչ պատիժ առին : — Կիրակին ե՞րբ
շաբաթին անց անցաւ եւ ինչո՞ւ : — Ի՞նչ պէտք է ընել
այդ օրը :

2. ԿԱՅԷՆ ԵՒ ՍԷԹ

Աստուած բարի հօր մը պէս , չնայելով մեր
նախածնողքին յանցանքին՝ զաւակներ տուաւ ,
որոնցմէ Կայէնը չար էր և Աբէլն ու Սէթը բարե-
պաշտ(*) : Կայէնի զաւակներն ալ չար եղան , իսկ
Սէթին զաւակները իրենց հօր նման բարեպաշտ :
— Սէթի սերունդը(*) միշտ Աստուծոյ աղօթք և
զօհ(*) կ'ընէր ուստի սիրելի եղաւ անոր ու Աստու-
ծոյ սրբի կոչուեցաւ : Բայց շուտով մոռցաւ Աստ-
ուածապաշտութիւնը վասն զի խառնուեցաւ Կայէնի
չար սերունդին հետ և չարութիւն ըրաւ : Աստ-
ուած ալ մտածեց աշխարհէս ջնջել(*) բոլոր մար-
դերը : — Աստուած չարերը պատժեւէ առաջ իբր
գլխած և բարի հայր ուղեց Ժամանակ տալ անոնց
որ զղջան(*) ու դառնան : Բայց երբ չդարձան ,
ամենուն կեանքը վերցուց աշխարհէս ջրհեղեղով(*) :

Պահի , ծով . — Պահը աղէկ բանէ մը զուրկ(*)
և հեռի մնալն է Աստուծոյ սիրոյն համար : Մեր
Աստուած սիրելը անկէ յայտնի է որ կարենանք
պահը բռնել մտեղէն՝ կաթնեղէն ու ձկնեղէն ու-
տելիքներէ , մեր հանգիստէն ետ կենալ որոշեալ
միջոցներ : Օրը մինչեւ երեկոյ Աստուած յիշած
ըլլարու համար բան չուտելուն՝ ծով կ'ըսուի :

Ո՞վ էր Կայէն եւ ո՞վ Սէթ : — Ի՞նչպէս էին անոնց
սերունդը եւ ի՞նչ կոչուեցան : — Ի՞նչու Աստուած ուղեց

ջնջել մարդիկը : — Աստուած ի՞նչպէս կը վարուի չարերուն հետ, նախ եւ յետոյ : — Ի՞նչ է պահքը : — Ինչէ՞ն յայտնի է մեր Աստուած սիրելի : — Ի՞նչ է ծովը :

3. ՆՈՅ ԵՒ ԶՐԵՆԵՆ

Աստուած հրամայեց եւ քառասուն օր գիշեր ցերեկ անձրեւեց : Զուրը ծածկեց լեռներն ու խեղդեց բոլոր մարդիկը : Սէթի ցեղէն արդար մարդ մը Նոյ Աստուծոյ սիրելին ըլլալուն ազատեցաւ : — Աստուծոյ հրամանով Նոյ շինեց նաւ մը որ Տապան կ'ըսուի եւ իր կինը, Սեմ՝ Քամ ու Յարէթ որդիները, հարսներն ու բոլոր անասուններէն զոյգեր առնելով մէջը մտաւ : Տարի մ'ետը Զուրը քաշուեցաւ, տապանը կանգ առաւ Արարատ(*) լեռին վրայ : Նոյ նաւէն աղանձի մը թողուց որ ոտքը դնելու տեղ չգտնելով դարձաւ ետ : Եօթն օրէն հասաւ մ'ալ թողուց որ չգարձաւ, ալ գետինը ցամքած էր : — Նոյ նաւէն ելաւ ու հանեց ամէնն ալ : Ծնորհակալութեան համար Աստուծոյ զոհ մ'ըրաւ : Աստուած ալ մարդիկը ջրհեղեղով մէյ մ'ալ չպատժելու համար ուխտ(*) ըրաւ որուն նշանը ծիածանն(*) եղաւ :

Վարդավառ . — Նոյ իր ընտանիքով Արարատէն իջած օրը տարւոյն սկիզբը կամ ամանորը(*) համարեց որ Նաւասարդ(*) ամսոյն մէկն էր : Ամէն

տարի այդ օրը ջրհեղեղը կը յիշատակուէր Զուր սրսկելով իրարու վրայ, աղանձի թռցունելով եւ վարդերով զարդարուելով : Ասկէ է վարդավառը զոր միացուց Լուսաւորիչ Այլակերպութեան հետ :

Ջրհեղեղէն առաջ քանի՞ օր անձրեւեց : — Ո՞վ ազատեցաւ ջրհեղեղէն : — Ո՞ր լեռին վրայ կեցաւ Տապանը : — Ի՞նչ ըրաւ Նոյ Զուրերուն քաշուին իմանալու համար : — Ո՞րն է Աստուծոյ եւ Նոյին ըրած ուխտի նշանը : — Ո՞րն է տարւոյն սկիզբը Հայոց մէջ : — Ի՞նչ կ'ընէին այդ օրը : — Ո՞վ միացուց այլակերպութեան հետ :

4. ԱՐՐԱՀԱՍԻՆ ԶՈՇԸ

Աստուած Նոյի ցեղէն Աբրահամին Իսահակ անուն զաւակ մը տուաւ, ծերութեան ատեն : Իսահակ երբ մեծցաւ, Աստուած Աբրահամին հաւատքը փորձելու համար, հրամայեց զոհել իրեն իր զաւակը : Աբրահամ հնազանդեցաւ : — Առտու մը էջը համեռեց(*), փայտը բեռցուց Իսահակին, ինքն ալ կրակն ու դանակը առած՝ լեռն ի վեր ելան : Իսահակ հարցուց հօրը թէ «Ո՞ւր է ոչխարը» : Հայրը ըսաւ . «Աստուած կը հոգայ, որդեակ» : — Աբրահամ լեռան վրայ սեղան մը շտկեց որուն կապելէ ետք տղան՝ դանակով վիզը կտրելու վրայ էր, ահա հրեշտակ-ամենակալը(*) արգելեց զինք «Զեռք մի դպցուներ տղուդ, ալ հասկցայ թէ

Աստուծոյ կը վախնաս, Արրահամ խոյ մը տեսաւ ծառէն կախուած, առաւ և զոճեց տղուն տեղ:

Մասաղ. — Առաջ զոճ կ'ընէին որ ամբողջօրին կ'այրուէր մեղքերուն տեղ: Քրիստոս զոճը կամ պատարագը(*) դադրեցուց և ինք պատարագուեցաւ: Հիմա զոճին տեղ սիրոյ հաց(*) կամ հոգեհաց կուտան, մատաղ(*) ընելով և մատաղցու կենդանիին կերցուելիք աղը քահանան կ'օրհնէ: Մեծ օրեր մատաղներ կը բաշխուին աղքատներու:

Արրահամին տղուն անունը ի՞նչ է: — Աստուած ի՞նչ հրամայեց: — Ուր պիտի զոճէր: — Ի՞նչ հարցուց Իսահակ ու ի՞նչ պատասխան առաւ: — Արրահամին ի՞նչ պատահեցաւ տղան զոճելու ատեն: — Զոճը ի՞նչ պէս կ'այրէր: Քրիստոս ի՞նչ ըրաւ: — Հոգեհացը ի՞նչ է եւ աղօրհնէքը ինչո՞ւ կ'ըլլայ: — Մատաղը որո՞ց կը բաշխուի:

5. ԻՍԱՀԱԿ ԵՒ ՌԵԲԵԿԱ

Արրահամի պատուէրով՝ Եղիազար ծառան անոր ազգականներէն՝ Իսահակին կին մը բերելու համար Միջագետի մէկ քաղաքը գնաց և ներս չը մտած՝ ուղտերն արձակեց ջրհորի մը մօտ ուրկէ քաղաքը ջուր կը տանէին կիներ: — Եղիազար Աստուծոյ աղօթեց որ այն աղջիկը որ ջուր տայ իրեն ու իր ուղտերուն, ըլլայ կինը Աստուծոյ սիրելի

Ը. ԱՄԻՍ

57. ՎԵՐԱՓՈՒՈՒՄՆ Ա. ԿՈՒՍԻՆ

Յիսուս իր խաչին վրայէն պատուիրեց Յովհաննէս Աւետարանիչին որ Մարիամ Աստուածածինը առնէ իր մօտ և մօրը պէս խնամէ: Մարիամ պառաւցած՝ ննջեց Յովհաննէսի տունը և Առաքեալները ու կոյսերը ջահերով տարին թաղեցին Գեթսեմանիի պարտէզը: — Ինը օր ետք Բարթողիմէոս քարոզութենէ Երուսաղէմ՝ դառնալով իմացաւ Մարիամու մահը, բայց երբ գնաց գերեզմանը՝ կարօտը առնելու, մարմինը չգտաւ: Հրեշտակները երկինք տարած էին: — Յովհաննէս Մարիամի կարօտը քաշել չտալու համար, իր գծած պատկերը նուիրեց Բարթողիմէոսի որ տարաւ Շատախի (Վանէն 3 օր հեռի) Հոգւոց վանքը գրաւ որ առաջ կուստուն էր Տիգրիս գետին եզերքին վրայ:

«Փառաւորեալ»-ը. — Բարթողիմէոսի հետ Աստուածածինին գերեզմանը գնաց Թովմաս որ երգեց. «Փառաւորեալ և օրհնեալ՝ միշտ Ս. Կոյս, Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի, մատո՞ զաղաչանս մեր (տուր մեր աղաչանքը) որդւոյ քոյ (քու զաւկիդ) և Աստուծոյ մերոյ (մեր Աստուածին)» . «Սուրբ Աստուած»ին կցեցին Առաքեալները:

Յիսուս ս՛րկէ և ի՛նչ պատուիրեց Յովհաննէս Աւետարանիչին : — Ո՛ր թաղուեցաւ Աստուածածինը : — Բարթողիմէոսի ի՛նչ պատահեցաւ : — Յովհաննէս ի՛նչ նուիրեց : — Բարթողիմէոս այդ պատկերը ս՛ր բերաւ : Թ՛ովմաս ի՛նչ երգեց : — Ո՛ր կցեցին այդ երգը Առաքելայնեք :

58. ՆԱԽԿԻՆ (*) ԼՈՒՍԱԻՈՐԻՉՆԵՐ ՀԱՅՈՑ

Յիսուսի տաններկու Առաքելայներէն մին Թաղէոս՝ Կեսարիոյ մէջ քարոզելէն ետք հասաւ Արտաղ գաւառը որ հիմա կ'ըսուի Մակու : Հոն հրաշքներով հաստատեց քարոզած կրօնքին ճշմարտութիւնը, անանկ որ շատ Հայեր հաւատացին Քրիստոսի սրտեց մէջ էին Ոսկի և ընկերները որ Հռովմէ եկած էին Սանատրուկի : Թաղէոսէն Հայոց առաջին հայրապետ ձեռնադրուեցաւ Զաքարիա : Սանատրուկ վախնալով հրեայներուն այս նոր ոյժէն և շատնալէն, հալածեց հրեայները, ուստի գլխատեց Թաղէոսը՝ անոնց առաջնորդը : — Բարթողիմէոս յաջորդեց Թաղէոսի և յուսա հատ Քրիստոնեայները քաջալերեց (*) ըյս-հաւատքին մէջ : Վան նահանգը եղաւ իր կեդրոն : Հոգւոց վանքը հաստատեց և Աղբակի մէջ (Պաշգալէ) մորթեցերծ (*) մեռաւ :

Պատգոմեայք . — Եկեղեցիին մէջ ծառայող բոլոր պաշտօնեայներն եպիսկոպոսէն կ'օրհնուին՝ կը ձեռնադրուին՝ կ'օծուին և այնպէս եկեղեցիին

սպասաւորութեան մէջ կը մանեն : Անոնց ամենուն մեծը Կաթողիկոսն է, անկէ ետքը կուգայ եպիսկոպոսը, վարդապետը, քահանան, սարկաւազը և դպիրը : Բահանան՝ Եպիսկոպոսը և Կաթողիկոսը կ'օծուին :

Թաղէոս ս՛վ էր և ս՛ր քարոզեց նախ : — Ո՛ր հրաշքներ գործեց : — Ոսկի և ընկերները ս՛վ էին : — Զաքարիա ս՛վ էր : — Ինչո՞ւ գլխատուեցաւ Թաղէոս : — Ո՛վ յաջորդեց իրեն : — Բարթողիմէոս ս՛ր քարոզեց : — Ո՛ր վանքը հաստատեց և ի՛նչպէս և ս՛ր մեռաւ : — Եպիսկոպոսն ի՛նչ կ'ընէ : — Եկեղեցականներու ի՛նչ աստիճաններ կան :

59. ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՎԿԱՆ ՍԱՆԴՈՒԻՍ

Սանատրուկի մէկ հատիկ աղջիկը Սանդուխտ կոյսը Թաղէոս առաքելէն հասկնալով կուռքերուն սուտ ու անզօր (*) ըլլալը, անոր աշակերտ եղած ու անոր հետ աղօթած էր : — Սանատրուկ իմանալով նախ խոստումներ ըրաւ իր զաւկին որ ականջ չընէ այդ հրեային խօսքերուն ու հայոց հին կրօնքը պաշտէ : Սանդուխտ լաւ սեպեց իր ծնողքը մտքէն հանել քան Քրիստոսը որուն վրայ Առաքելալը լաւ կը խօսէր : — Սանատրուկ կարծելով թէ անոյ դէմ կենալուն պատճառը առաքելայն է, սպաննել տուած էր՝ և աղջիկն ալ բանտարկած : Բայց Սանդուխտ բանտին մէջէն ալ

կ'աղօթէր Յիսուսի : Այն ատեն դահիճ (*) գնաց ու գեղեցիկ գլուխը կարեց Ս. Կոյսին որ Հայոց առաջին վկան եղաւ Քրիստոսին :

Եկեղեցի . — Եկեղեցիին շէնքն ալ կ'օծուի : Շինութեան քարտէսը (*) որոշուած է որմէ դուրս ձեւ չընդունուի : Հիմերը որոշեալ թիւով քարեր կը դրուին առաքեալներուն ու Սուրբերուն անունով, մատուցներ կը դրուին, մատաղներ կը մորթուին, աղօթքներ կ'ըլլան : Շինուելէ ետքն ալ որոշեալ տեղեր կ'օծուին Եպիսկոպոսէն :

Ո՞վ էր Սանատրուկի աղջիկը : — Ի՞նչ ըրաւ : — Հայրն ի՞նչ կ'ըսէր և ինք ի՞նչ կը պատասխանէր : — Բանախն մէջ ի՞նչպէս կ'ապրէր Սանդուխտ : — Ի՞նչպէս մեռաւ : — Եկեղեցիին հիմերը ի՞նչ կը դնեն : — Ի՞նչպէս կը շինուի եկեղեցին : — Ո՞վ կ'օծէ եկեղեցին :

60. ԼՈՒՍԱԿՈՐԻՉ ԵՒ ՏՐԴԱՏ

Գրիգոր Անահիտի (*) չքոճերուն համար շատ չարչարուելէ ետք Արտաշատի խոր-վիրապը (*) նետուեցաւ ուր թունաւոր սողուններ (*) կը վխտային (*) : Երբ Հռիփսիմեանց մահը ազդած (*) ու կատաղութիւն բերած էր Տրդատին, տեսիլքի մը վրայ Գրիգոր 14 տարի ետք հանուեցաւ ողջ : — Տրդատ ու առաջաւորներ (*) հաւատացին Քրիստոսի զոր կը քարոզէր Գրիգոր և առաջաւորաց պահքը բռնե-

լով ապաշխարեցին և բժշկուեցան : Քրիստոնէութիւնը պաշտօնական կրօնք դարձաւ հայոց, 301 թուին : — Կեսարիայէն դարձին ուր եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Ղեւոնդիոս հայրապետէն, Եփրատի մէջ բոլոր հայ քրիստոնեայները մկրտեց և հոգեւոր հովուութեան համար 400 եպիսկոպոս ձեռնադրեց Գրիգոր որ լուսաւորիչը եղաւ հայոց և շինեց Էջմիածնի (*) տաճարը (*) երկնային տեսիլքի մը վրայ :

Շարական, Ժամագիրք . — Շարականը հոգեւոր երգերու հաւաքածոյ (*) մ'է՛ Ս. Գիրքէն առնելով նիւթը (*) : Իսկ Ժամագիրքը (*) ունի օրուան Ժամերու վրայ կատարուած աղօթքները որոնց Ժամերգութիւն կ'ըսուի : Շարականի ու Ժամագիրքի մէջ Ս. Սահակէն ու Մեսրոպէն ետք ուրիշ վարդապետներ ալ գրած ու աւելցուցած են :

Գրիգոր ինչո՞ւ և ո՞ւր նետուեցաւ : — Երբ հանուեցաւ անկէ : — Ի՞նչ ըրաւ Գրիգոր : — Հայերը երբ ընդունեցին Քրիստոսի կրօնքը : — Գրիգոր ո՞ւր ձեռնադրուեցաւ, և քանի՞ եպիսկոպոս ձեռնադրեց : — Ո՞ր վանքը շինեց : — Ի՞նչ են շարականները : — Ի՞նչ կայ Ժամագիրքին մէջ : — Ո՞վ կազմած է զանոնք :

61. ՍԱՀԱԿ ԵՒ ՄԵՍՐՈՊ

Սահակ հայրապետը ու Մեսրոպ վարդապետը տեսնելով թէ Ս. Գիրքը օտար լեզուով կը կարդացուի հայ եկեղեցիին մէջ, ցաւ զգացին ու ջա-

նացին հայերէն գիր գտնել բայց չկրցան : — Մես-
րոպ որ Մաշթոց կ'ըսուէր՝ երբ ալ Աստուծոյ ապա-
ւինելով (*) կը քնանար , երաղին մէջ Ամենակալին
Աջը(*) տեսաւ որ հայ ձայնաւոր գիրերը կը գծէր :
Արթնցաւ , գրի առաւ , և հնարելով այբուբենը
ուսուց դպրոցներուն մէջ զոր Վաւաճապուհ բա-
ցաւ : — Ս. Սահակ և Ս. Մեսրոպ աշակերտներու
հետ թարգմանեցին Ս. Գիրքը հայերէնի 406 թուին ,
գրեցին անոյշ շարականներ՝ ժամագիրքը՝ տօնա-
ցոյցը նաև ծիսարանը որ մաշտոց անունը առաւ :
Արարողութիւնները ու ծէսերը սկսան հայերէն
ըլլալ : Հայ եկեղեցին ու դպրոցը ծնան :

Ծիսարան , Տօնացոյց . — Մեսրոպ գրած է
մկրտութեան՝ գրոշմի՝ (*) հաղորդութեան՝ (*) ապաշ-
խարութեան՝ (*) ձեռնագրութեան՝ (*) պսակի՝ (*)
հիւանդաց և յուզարկաւորութեան (*) կարգերու
ծիսարանը : — Տօնացոյցը կը ցուցունէ ամէն օրուան
տօները և անոնց խրատները : Տօնացոյցին մէջէն
կարճեցներով շինած են «Օրացոյցը» :

Ո՛վ և ինչո՞ւ ցաւ զգացին : — Մեսրոպ ի՞նչ կ'ըս-
ուէր : — Հայոց գիրը ի՞նչպէս գտնուեցաւ : — Ս. Գիրքը
ե՞րբ թարգմանեցին և ո՞վ : — Ի՞նչ գրեցին : — Ծիսա-
րանի մէջ ի՞նչ կայ : — Տօնացոյցը ի՞նչ կը ցուցնէ : —
Օրացոյցը ի՞նչ է :

62. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԲ

Գիրք եկեղեցիին մէջ . — Եթէ այր է քրիս-
տոնեայն պէտք է որ բացաղուի (*) աղօթէ եկե-
ղեցիին մէջ մինչեւ վերջ , իսկ կինը գլուխը գո-
ցած : Ծունկի կուգան երբ սուրբ հաղորդութիւնը
կը վերաբերի (*) «սրբասացութեան» , «միայն սուրբ»
և «ի սուրբ սուրբ»ի ատեն : Աւետարանը ոտքի վրայ
և գիրքը , նստած , մտիկ կ'ընեն , միշտ լուռ ու մունջ :

Ձգեստ մուսուսի . — Եկեղեցիին մէջ ինչ որ
պիտի գործածուի պէտք է որ անոր վրայ յատուկ
աղօթք մը կարդացուի և օրհնուի որպէս զի Աս-
տուծոյ յատկանայ , նուիրուի : Այսպէս եկեղեցա-
կաններուն ամէն ղգեստները , ջահ ու աշտանակ (*)
գիրք ու գրօշակ (*) գաւազան , գորգ , ջօշափ (*) սկիհ (*)
փռոց պէտք է աղօթքով նուիրուին Աստուծոյ :

Եկեղեցիներ . — Գրիստոսի ծնունդէն մինչև
451 տարի , հայ , յոյն , ասորի և հռովմէական
իրարու եկեղեցի կ'երթային՝ իրարու քահանայէ
կը հաղորդուէին , իրարու ըզուով կ'աղօթէին :
Ամենուն սուրբը՝ տօնը ու ծէսը մէկ էր : Բայց վերջէն
յոյնէն ու լատինէն հայերը բաժնուելով՝ ալ մինակ
հայ եկեղեցականը ճանչցան ու հայ ծէսը պահեցին :

Եկեղեցիին մէջ ի՞նչպէս կենալու են այրը և կինը :
— Ե՞րբ ծունկի կուգան : — Ե՞րբ ոտքի վրայ կը մնան :
— Կը խօսին եկեղեցիին մէջ : — Ի՞նչ կ'ըլլան եկեղե-
ցիին ղգեստները և անօթիները , գործածուելէ առաջ :
— Մէկ քանին կը յիշէ՞ք : — Եկեղեցիները մէկ եղած ատեն
ի՞նչ կ'ըլլային : — Ի՞նչէն զատուեցան եկեղեցիները :

Բ Ա Ռ - Գ Ի Բ Ք

Ա.

Ազգել . Տպաւորութիւն ը-
նել
Ազնիւ . Լաւ , ընտիր
Ակամայ . Չուզելով
Ակում . Եկեղեցական նշա-
նաւոր օր
Ակումիս . Անքուն հսկող
ճգնաւոր
Աղաղակել . Կանչել
Ամաճօր . Նոր տարի
Ամեցակալ . Աստուած
Ամփոփում . Համառօտու-
թիւն , իմաստ
Այգուց . Առաւօտուն կա-
նուխ ննջեցելոց համար
աղօթք
Այլակերպութիւն . Կերպա-
րանքին փոխուիլը
Այրի . Կին մը որուն էրիկը
մեռած է
Անահիտ . Աստուածուհի
կրօնապաշտ Հայոց
Անառակ . Անպիտան , փո-
զոցի աղայ
Անդասան . Արտ
Անգէն . առանց զէնքի
Անգօր . Առանց ոյժի , ոյժ
չունեցող
Անխալիան . Առանց դադ-
րելու՝ ետ մնալու

Անկեցական . Կանքչունեցող
Անհրաժեշտ . Անպատճառ ,
չատ պէտքըրցու
Անձ . Մարդը բուն , ինքը
Անմիտ . Անխելք , յիմար
Անշունչ . Շունչ չունեցող
Անուանակից . Անունը առ-
նոց , մէկ անունով
Անքուն . Առանց քնանալու
Անօր . Աման
Աեսանակ . Մոմը բննող
գործիք (տաճկ . շամսան)
Ապաշխարող . Զղջալով
մեղքը քաւող
Ապաշխարութիւն . Սխա-
լին զրայ զղջալը
Ապաւիճիլ . Յոյսը դնել
Աջ . Չեռքը , աջ ձեռքը
Առակ . Զրոյց , բարոյա-
վէպ , պատմութիւն
Առաքեալ . Բրիտանոսէ զըր-
կուած քարոզելու
Արքեպեցել . Խմցիւկ
Արեւապաշտ . Արեւը Աստ-
ուած ճանչցող
Արժարախրութիւն . Դրամ
չատ սիրելը
Արտադրել . Դուրս հանել ,
բերել
Աւան . Պղտիկ քաղաք
Ասեան . Դասին կեդրոնը ,
ժողովուրդին մէջ

Բ.

Բազկաւարած . Չեռքերը
բացած
Բազմացում . Շատնալը ,
չատցնելը
Բազմաբիւ . Շատութիւն ,
չատ մարդ
Բաժակ . Սկիհ
Բարեպաշտ . Աստուած սի-
րող , պաշտող
Բացազուխ . Գլուխը բաց
Բեհեզ . Նրբարուեստ ծան-
րադին զգեստ
Բեք . Արդիւնք , պտուղ ,
հողէն ելածը
Բիր . Ծեծի դաւաղան
Բոցեղեն . Բոցի նման ,
կայծի պէս

Գ.

Գալուս . Գալը
Գամել . Բեւեռել
Գոգ . Գիրկ , ծոց
Գոնարանական . Շնորհա-
կալութեան
Գրաս . Բեռ տանող կեն-
դանի , էջ , ձի

Դ.

Դագաղ . Մեռելը տանող
ճող , ջաղը [տանող
Դագաղակիր . Դագաղը
Դանին . Գլուխ կտրելու
պաշտօնեայն
Դամասկոս . Շամ քաղաքը
Դաս . Խրատ

Դար . Հարիւր տարի
Դարմանել . Դեղ ընել , հի-
ւանդը նայիլ
Դեմպետ . Արեւապաշտ կրօ-
նաւոր
Դի . Կողմ
Դոյլ . Հորէն ջուր քաշելու
աման (տաճկ . զօլա)
Դրօւմ . Միւսնով օծում

Ե.

Երախայրիք . Տարւոյն մէջ
առաջին հունձքը ո եւ է
բերքի
Երացութիւն . Չորութիւն
եղջիւր . Կոտոյ , պտուղ մը
(տաճկ . ֆէշի պոյնուզը)
Երկիւղած . Աստուած մէ վախ-
ցող [գամ սաստիկ
Երցնապատիկ . Եօթն ան-
Երցօրեք . Եօթն օր շարու-
նակ աղօթք , եօթնե-
րորդ օրուան աղօթք

Զ.

Զղջալ . Յանցանքը ճանչ-
նալ եւ քաւել
Զոն . Ամբողջովին այրե-
լու՝ մորթելու կենդանի
Զուրկ . Զունեցող , պակաս

Է.

Էջ-միածին . Իջաւ միածի-
նը Վանք եւ Աթոռ Հա-
յոց ընդհանրական Հայ-
րապետի

Ք.

Թափառիլ . Առանց նպատակի պարալիլ
Թափոր . Կարգով անցք ժողովուրդին մէջէն
Թիւ . Առանց եղանակի (կարգալ)

Ժ.

Ժամագիրք . Ժամը ժամին կատարուելիք արարողութեանց համար գիրք
Ժամարար . Պատարագը նող , ժամերգութիւն կատարող

Ի.

Ինչ . Ստացուածք , հարստութիւն

Լ.

Լալագին . Սաստիկ լալով
Լուծ . Երկու եզ , լծուող զոյգ

Խ.

Խայրուիլ . Կճուիլ
Խզել . Կտրել
Խոզարած . Սող արածող
Խորանակար . Վրան կարող , վրան շինող
Խոր-վիրապ . Գեանափոր խոր , բանա
Խտանալ . Սաստիկանալ , բարկանալ , ամուրցնել

Մ.

Մանրագին . Սուղ , թանկ
Միածան . Միրանի գոտին երկինքի վրայ
Միւրանի . Կարմիր գոյնով կերպասէ հագուած

Կ.

Կարնկեր . Կաթ ուտող , ծծկեր
Կամաւոր . Սիրով կամքով ըլլալիք [տուկ
Կայսերական . Կայսրի յայտ . Թագաւորի եւ իշխաններու մեծը
Կարաս . Սոչոր տակառ , բղուկ
Կիրակամուտ . Շարաթ իրիկուն որ կիրակի կը լուսնայ
Կիրակի . Տիրոջ օր , հանգըստի օր
Կնեայ . Բարէ
Կոկոզալիք . Հպարտ , զըլուխը տնկած
Կողով . Ճիւղերով հիւսուած կթոց (տաճկ . սեղե , սեղիթ)
Կոչուց . Հրաւեր , հացկերոյթ , խնջոյթ
Կուռք . Հեթանոսներու աստուածը
Կուասուն . Կուռքի տեղ , հեթանոսներու աղօթատեղի
Կրսեր . Պզտիկ

Լ.

Հայածական . Բշուելով նեղուելով
Հալորդութիւն . Գրիտտոսի մարմինն ու արիւնը առնելը
Հանելի . Ուղած , կամքին համաձայն
Համաճարակ . Ամէն գիտարածուող հիւանդութիւն
Համաձայն . Պէս
Համամիտ . Սօսքը՝ միտքը մէկ
Համբառնալ . Վեր ելնել՝ երկինք բարձրանալ
Համեսել . Կենդանիին թամբը դնել
Հաւաքածոյ . Ժողովուած , քաղուած
Հեսեւեալ . Ետքի , սա՛
Հնոց . Փռռ
Հոգեմաց . Մեռելներու հոգիներուն համար ճաշ
Հպասակ . Թագաւորի մը իշխանութեան տակեղող
Հսկող . Գիշերը աղօթքի մէջ լուսցունող
Հրածարիլ . Ետ կենալ , քաշուիլ
Հրապարակ . Բաց տեղ մը
Հրավառութիւն . Կրակ վառելը
Հրեցակ . Մարմին չունեցող հոգեղէն մը
Հրեցակ ամենակալ . Աստուծոյ զրկած հրեշտակը

Չ.

Չեռնադուրիւն . Եկեղեցական ըլլալու համար կարգ առնելը
Չորակ . Պզտիկ ձոր

Ղ.

Ղեկզակ . Գողջոց

Ճ.

Ճոխ . Հարուստ ձուպան . Չուան , պարան ճրագալոյց . Չատկի եւ Մնունդի նախորդ օրը

Ս.

Մասունք . Սրբոց սկորներու կտորուանք
Մասաղ . Աստուծոյ նուիրուած կենդանի
Մասուռ . Պզտիկ եկեղեցի , սուրբի մը գերեզմանի վրայ շինուած
Մար . Հեղու կի՛ճէթի չափ մը
Մարգարէ . Աստուծոյ խօսքերը մարդոց իմացնող , գուշակող
Մարդանամար . Ժողովուրդը՝ երկրի մը բնակիչը համբել եւ զրել
Մախաւոր . Ապրանքէ տուրք առնողը , մեղաւոր
Մեծասուն . Հարուստ
Միածին . Մօրը մէկ հատը , մէկ հատիկ

Մխիթարուիլ . Ուրախանալ
Մորթեգերծ . Մորթը արկ
հանելով
Մսխել . Շատ եւ անպէտ
բաներու ծախսել
Մսուր . Կենդանիներուն
կեր կերած սեղը

Յ.

Յափճակող . Խլող, զրկող
Յիւսասակ . Յիշուելու հան-
դէս , պատճառ
Յուղարկաւոր . Ննչեցեա-
լին ետեւէն գնացող սը-
գաւորներ
Յուղարկաւորութիւն . Նշն-
ջեցեալներուն կարգ

Ն.

Նաժիս . Սպասուհի , ա-
ղախին
Նախասուիլ . Գէշ խօսուիլ,
յանդիմանուիլ
Նախասօնակ . Տօնի մը
առջի երեկոյին եղած
հանդէս
Նախարարապետ . Նախա-
բարներու պետ
Նախկին . Առաջին
Նահանգ . Մեծ գաւառ ,
թեմ , կուսակալութիւն
Նահասակ . Քրիստոսի հա-
մար արիւն թափող
Նահասակուիլ . Քրիստոսի
համար արիւն թափել
Նաւասարդ . Նոր տարիի
առաջին ամիսը

Նզովել . Ընկերութեան մէջ
չճանչնալ , զուրս հանել
Նիւք . Իմաստ
Նկարել . Ներկով գծել
Նեան . Չուր , նմանու-
թիւնը , յիշեցնողը

Շ.

Շրջաբերում . Պարտցունելը
Շօտափ . Խաչ՝ Աւետարան
բռնող լաթը

Ո.

Ոգեւորիլ . Սիրտ առնել
Ուլս . Դաշինք , պայման
Ուղղամտութիւն . Շրտակ
ընթացք
Ուրացող . Մերժող , չըն-
դունող

Չ.

Չորտղապետ . Հրէաստա-
նի չորս մասերէն մէկուն
իշխանը
Չխաւորիլ . Կարօտութեան
մէջ իյնալ

Պ.

Պալաս . Թագաւորի բնա-
կարան
Պանել . Պահք բռնել
Պանարախ . Կենդանի
ցաւ
Պանդոկ . Իջեւան (տաճկ-
խան)

Պանդոկապետ . Պանդոկը
գործածող
Պապակիլ . Մարաշիայ
Պասանաւաթ . Դիպուածով,
հանդիպմամբ
Պասանի . 12ն 18 տարե-
կան տղայ
Պասարագ . Զոհ , նուիրում
Պատերազմ . Կռիւ
Պարսախիլ . Նեա նեաեւու
գործիք , զէնք
Պարսաւար . Նեաեւու նեա՝
քար
Պարսապան . Պարտական ,
պարտք ունեցող
Պենետիոստ . Զատիկէն 50
օր ետք հրէից մէջ տօն մը
Պետ . Մեծ , գլխաւոր
Պիւն . Շատ , ամենէն ա-
ւելի
Պսակ . Հարսնիքի օրհնէնքը

Ջ.

Ջնջել . Աշխարհէ վերցնել ,
ոչնչացնել
Ջրնեղեղ . Զուրի հեղեղով
կործանում

Ս.

Սաղմ . Կենդանիին առա-
ջին զիճակը , նիւթը
Սաղմոսել . Երգել
Սար . Լեռ
Սարկաւագ . Աղքատին հող
տանող պաշտօնեայ
Սափոր . Զուրի խոշոր փարջ
(տաճկ . ծեսի)

Սափրել . Մազերը կտրել
Սերունդ . Զաւակները
Սիւն . Լեռ մը ուր Մովսէս
Աստուծոյ առաւ տան
պատուէրներ
Սկիւն . Բաժակ Պատարագի
համար
Սնափառ . Պարագ բանի
մէջ փառք փնտոյ
Սողուն . Սողացող կեն-
դանի
Սով . Ուտելիքի պակա-
սութիւն
Սպառիլ . Հատնիլ
Սեղծել . Զեղած բան մը
մէջտեղ բերել

Վ.

Վահան . Նեախն դէմ դնող
գործիք , զէնք
Վա՛յ . Անէ՛ծք , ձիւնը գըլ-
խուդ
Վանք . Ուխտատեղի
Վանել . Շատ ծախսել
Վերաբերել . Վեր բարձրա-
ցընելով տանիլ սկիւր
Վերնասուն . Տան վերի
յարկը , կանանց մասը
Վիճակ . Բան մը բախտով
որոշելը
Վիճափոր . Քարի մէջ փոր-
ուած
Վխսալ . Ետալ , շատնալ
Վկայատեր . Սուրբերուն
կեանքը սիրող , գործը
փառաբանող
Վկայարան . Տաճար

Վշտահար . Յաւած
Վրան . Կաւաւով ծածկուած
բնակարան (տաճկ. չա-
շրր)

Տ.

Տաղաւար . Վրան , խորան
(տաճկ. չաշրր)
Տանար . Եկեղեցի
Տանուսէր . Երեւելի , իշ-
խան , նախարար
Տասանորդ . Տասնէն մէկի
տուրք
Տարածել . Երկնցնել , փը-
ւել
Տարեդարձ . Տարին լրա-
նալուն հանդէս
Տարեկից . Տարին լրացած
օրը
Տարեց . Տարիքոտ մէկը ,
տարիքով մեծը
Տեսլիլ . Երազ , աչքը բաց
վիճակի մէջ
Տնսես . Մատակարար . վե-
րակացու
Տուրք . Մեծին՝ իշխանին
արուելիք
Տօնախմբութիւն . Տարե-
դարձի հանդէս

Ց.

Ցեց . Ուտիճ , սրդ սր կը
կրծէ
Ցոյց տուիլ . Տեանուելու
համար դրուիլ , ցուցու-
նել

Յուլ . Գաւազան

Փ.

Փարիսեցի . Հրէական կը-
րօնքին շիտակ հետեւող,
կեղծաւոր
Փող . Տեսակ մը սրինգ
(տաճկ. պօրու)
Փորձութիւն . Վտանդ

Ք.

Քաղցած . Անօթի , սոված
Քաջ . Արի , զօրաւոր
Քաջալեքել . Միրտ տալ
Քանասունք . Քառասուն
օր կամ քառասներորդ
օրը
Քարայր . Քարի մէջ փոր-
ուած տեղ , այր
Քարկոծել . Քարել , քար
նետելով սպաննել
Քարսես . Յատակադիժ
տախտակ
Քնար . Երաժշտական գոր-
ծիք (տաճկ. սանթուր)
Քոռ . Յորենի չափ մը
Քուրմ . Կուռքի պաշտօն-
եայ , սուտ քահանայ

Օ.

Օծել . Անուշահոտ իւղ կամ
ջուր քսել
Օձահար . Օձէ խայթուած
Օրան . Քաղուած հունձքը,
ցանքը

Յ Ա Ն Կ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵՍԿԱՆ

1. Նախածնողը	Կիրակի	11
2. Կայէն և Սէթ	Պահք, ծով	13
3. Նոյ և զրհեղեղ	Վարդավառ	14
4. Աբրահամին զոհը	Մատաղ	15
5. Իսահակ և Ռեբեկա	Տէրունական աղօթք (գրաբար)	16
6. Յակոբ և Եսաւ	Տէրունական աղօթք (աշխրհբար.)	18
7. Յովսէփի գեղեցիկ	Տէրունական աղօթք	19
8. Մովսէս և Կարմիր ծովու անցքը	«Հայր մեր»	20
9. Օձազուխ գաւազանը	Խաչվերաց	22
10. Յեփթայէ	«Որ յերկինս ես»	23
11. Սամսոն	Ուխտագնացութիւն	24
12. Սամուէլի մանկութիւնը	«Ուրբ եղիցի անուն քո»	25
13. Դաւիթ ու Գողիաթ	«Եկեսցէ արքայութիւն քո»	27
14. Դաւիթ ու Սաուլ	Սաղմոս, ծննդայ, երգեհոն	28
15. Սողոմոն իմաստուն	«Եղիցին կամք քո օրպէս յերկինս»	29
16. Եղիա մարգարէն	«Զհաց մեր հանապազօրդ տուր»	30
17. Եղիսէ և Նէեման	«Եւ թող մեզ զպարտիս մեր»	32
18. Դոթողիա և Յովաս	Սուրբ Միւռոն	33
19. Եսայի և Եզեկիա	«Որպէս և մեր Թողումք մերոց»	34
20. Տովբիթ	«Եւ մի տանիր զմեզ ի փորձութ.»	35
21. Նարեկոդոնոսը և երեք մա- նուկները	Յուդարկաւորութիւն	36
22. Դանիէլ մարգարէն	«Այլ փրկեա ի չարէ»	37
23. Յուդիթ	Խաղողի օրհնութիւն	38
24. Եսթեր	«Զի քո է արքայութիւն և զօրք.»	39
25. Յիսուս-Քրիստոսի ծնունդը	Զեռնամած, բազկատարած	41
26. Մոգերու այցը	Խնկարկութիւն	42
27. Սիմէոն ծերունի և Աննա պատու Մով, խունկ		43

28. Եզիպտոս փախուստը և Բեթղե- հէմի կոտորածը	Խաչակներում, ծնրադրուծ. երկ.	44
29. Յիսուս Տաճարին մէջ	Նշխար ու մաս	46
30. Յովհաննէս մկրտիչ	Չորեքշաբթի և ուրբաթ	47
31. Յիսուսի մկրտութիւնը	Խաչը չուրը ձգել	48
32. Կանայի հարսանիքը	Տնօրնէք	49
33. Նայինի պատանին	Իշխանութիւն (հոգեւոր)	51
34. Առակ որովհին և ցորենին	Ժամուց, զանձանակ	52
35. Հացին բազմացումը	Պնակ	53
36. Յիսուսի այլակերպութիւնը	Տաղաւար, ձրադայոյց	54
37. Բարի Սամարացին	Հակում	56
38. Ղազարու յարութիւնը	Սուրբ	57
39. Առակ կորուսեալ ոչխարին	Տօն	58
40. Անտակ որդին	Խաչալուայ	59
41. Առակ տնտեսին	Պատկեր	61
42. Մեծատունը ու աղքատը	Յայտաւորք	62
43. Փարիսեցին ու մաքսաւորը	Սարգանք պատկերներու	63
44. Յիսուս և մանուկները	Օծում պատկերի կամ խաչի	64
45. Անմիտ հարուստը	Տօնախմբութիւն	66
46. Յիսուս Երուսաղէմի մէջ	Նախատօնակ	67
47. Մեծ կոչունքը	Թափոր, Անդաստան	68
48. Վերջին ընթրիքը	Չատիկ	69
49. Ռանայուայ	Օծում	71
50. Յուդայի մատնութիւնը	Սեղան	72
51. Յիսուսի չարչարանքը	Հոգեհանգիստ	73
52. Յիսուսի խաչելութիւնը	«Սուրբ Աստուած»	74
53. Յիսուսի յարութիւնն ու համ- բարձումը	Չատկական հաւկիթ	76
54. Սուրբ Հոգիին գալուստը	Պատարագ	77
55. Ստեփանոս սարկաւազ	Եկեղեցւոյ մասերը	78
56. Պօղոս առաքեալ	Աւետարան, Գ. Առաք., Թուղթեր	79
57. Վերափոխումն Ս. Կուսին	«Փառաւորեալ»ը	81
58. Նախկին լուսաւորիչներ Հայոց	Պաշտօնեայք	82
59. Առաջին Հայ վկան Սանդուխտ	Եկեղեցի	83
60. Լուսաւորիչ և Տրդատ	Շարական, Ժամագիրք	84
61. Սահակ և Մեսրոպ	Ծիսարան, Տօնացոյց	85
62. Եկեղեցական գիտելիք	Դիրք եկեղեցիին մէջ. Չգետք և անօթք. Եկեղեցիները	87

ԳՐԱՏՈՒՆ

Պ. Պ Ա Լ Ե Ն Ց

20, Չախմախար Եօզուշու, 20
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԱՄԵՆԱՃՈՒ ՄԹԵՐՔ

ԴՊՐՈՑԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ՎԻՊԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԳՐԵԱՆՑ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, պատկերազարդ, բազմաթիւ քարտէսներով զարդարուած, Դ. Խաչկունց

Տարրական Դասընդացք	Ա. Լ Բ.	տարի	3
Միջին	» Գ. Լ Դ.	»	7
Բարձրագոյն	» Ե. Լ Զ.	»	10

ՄՏԱՒՈՐ ԵՒ ԳՐԱՒՈՐ ԹՈՒԱՐԱՆՈՒԹԻՒՆ Գ. Դա-վանեան.

Տարրական Ընթացք.	Գ. տիպ.	4 1/2
Միջին	» Գ. »	7
Բարձրագոյն	» Բ. »	12

Գին 2 դր.

معارف عمومیہ نظارت جلیہ سنک فی ۸ شوال ۳۲۱ و ۵ اکتون اول ۳۱۹
تاریخی و ۳۳۹ نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدر

0026508

2013

376

<< Ազգային գրադարան



NL0026508

ԳՐԱՏՈՒՆ

Պ. Պ Ա Լ Ե Ն Ց

20, Չափաւարար Եօգուշու, 20

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԱՄԵՆՍՃՈՒՄ ՄԹԵՐՔ

ԴՊՐՈՑԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ՎԻՊԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԳՐԵԱՆՑ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, պատկերազարդ, բազմաթիւ քարտէսներով զարդարուած, Գ. Խաչկունց

Տարրական Դասընդացք Ա. և Բ. տարի	3
Միջին » Գ. և Դ. »	7
Բարձրագոյն » Ե. և Զ. »	10

ՄՏԱԻՈՐ ԵՒ ԳՐԱԻՈՐ ԹՈՒԱՐԱՆՈՒԹԻՒՆ Գ. Գաւաճեան.

Տարրական Ընթացք. Գ. տիպ.	4 1/2
Միջին » Գ. »	7
Բարձրագոյն » Բ. »	12

Գին 2 դր.

معارف عمومیہ نظارت جلیہ سنک فی ۸ شوال ۳۲۱ و ۱۵ کانون اول ۳۱۹
تاریخی و ۳۳۹ نومرولی رخصتنامه سیله طبع اولتمشدر